

«ԱՅՈ» Թե «ՈՂ» ԽՍՀՄ-ին

Սեպտեմբեր 21-ին ժողովուրդը վճռելու է Հայաստանի կարգավիճակը Խորհրդարանը որոշում է ընդունել հանրաքվեի մասին

Այս շաբաթ խորհրդարանում թե՛ մթնոլորտ էր: Երկար քննարկումներից հետո վերջապես ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» չարչրկված օրենքը:

Վերջին օրերին խորհրդարանը եռում էր անցյալ օգոստոսի նման: Անկաշկանդ քանակներ էր ծավալվել միութենական հանրաքվեի, միութենական պայմանագրի շուրջ: Բախվեցին իրարամերձ տեսակետներ, որ ներկայացնում էին խորհրդարանի մի քանի պատգամավորական խմբերը: Մերժվեց միութենական հանրաքվեն ու պայմանագիրը: Խորհրդարանի նախագահն

ատաշինն անվանեց «քաղաքական նպատակներ հետապնդող ոչ իրավական ակտ», երկրորդը՝ «ուտոպիա»:

Որոշվեց ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ մարտի 17-ի ռեֆերենդումը չանցկացնել Հայաստանում, այլ վեց ամիս հետո՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին անցկացնել Հայաստանի Հանրապետության հանրաքվե՝ մեկ հարցով. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ, ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս»:

Թերթի 2-րդ էջում կարդացեք քննարկված հարցերին վերաբերող մի քանի կարծիքներ:

Ժողովրդավարութեն և ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՆԱՌՈՎ

Ի վերջոյ վարագոյրը ցած իջաւ Պարսից ծոցի տագնապի երկրորդ արիւնալի արարի վրայ, եւ արդէն բացուել է երրորդ անլի քարոյ ու խրթին արարուածը, որի ընթացքում դիւանագէտները պիտի փորձեն նոր տուեալներից մեկնելով կայունութիւնը վերահաստատել շրջանում: Պրեզիդենտ Բուշը կ'աշխատի իր խոստացած «Նոր կարգուկանոնը» (New Order) հաստատել կամ նոյնիսկ պարտադրել շրջանում, արեւմտեան միւս երկրները կը փորձեն իրենց շահերը համակարգել Մ. Նահանգների վարած քաղաքականութեան հետ, Խ. Միութիւնը, իր ապաժամ ու մերժուած միջամտութիւնից յետոյ, կը ձգտի իր ունեւորին փաթաթուած Իրաքի դատապաշտպանի դերով իր շուրջ հաւաքել շրջանի բոլոր յուսալքուածներին եւ երկխոյզներին, Իսրայէլն ու Թուրքիան կ'աշխատեն որեւէ բան պոկել Սադդամի քաղաքական դիակից, իսկ արաբական երկրների պետերը կը շարունակեն իրենց աւանդական եղբայրակոյնները լիցերութեան համար: Ու կը մնան շրջանի յուսահատները ու յուսալքուածները, որոնց մէջ պաղեստինցիները չեն լինի մեռակ:

Ասում են՝ պատերազմը ձախողութիւնն է դիւանագէտների: Գուցէ՛ Սակայն կարծում ենք, որ գուցէ Պարսից ծոցի տագնապի պարագայում ոչ այնքան դիւանագիտութեան՝ որքան այլ բանի պետք է վերագրել մեղքը: Դա ժողովրդավարութեան-ոսմկավարութեան քացակայութիւնն է շրջանում:


Աշխարհում հաւանաբար ոչ մի տեղ ժողովրդավարութիւնն այնքան հողովուած ու շարժարուած չի եղել, որքան Մերձատր Արեւելքում: Ամէն մի տիրակալ, աշխարհի այդ շրջանում, այն լինի երկրի նախագահ, թագաւոր, էմիր, քանապետ թէ՛ գնդապետ, իր սրբազան պարտքն է համարում խօսել ու ջատագովել ժողովրդավարութիւնը կամ դեմոկրատիան (ինչպէս հնչում են արաբերէնում), որ չկայ ու չկայ: Այն չկայ նաեւ շրջանի այն երկրներում, ներառեալ Թուրքիան եւ Իրանը, որոնք ըստ կարգավիճակի պաշտամունքներ ունեն: Ջանք որ որեւէ թագաւոր, էմիր, նախագահ, գեներալ կամ կրօնապետ կարող է այն լուծել կամ կախակայել ուզած ժամանակ: Արաբական այն միակ երկիրը, որն ըստ էութեան ժողովրդավարական կարգեր ունէր, Լիբանանն էր, նախապատերազմեան Լիբանանը, որ սակայն չհանդուրժուեց իր հարեւան թէ հեռաւոր «քարեկանների» կողմից: Նոյնիսկ Իսրայէլը, որ ծանօթ է իբրեւ շրջանի միակ ժողովրդավարական երկիրը, ըստ էութեան այդպիսին չէ՛, քանզի նրա ժողովրդավարութիւնը վերաբերում է միայն... հրեաներին, մինչդեռ ահաւոր ցեղապաշտութիւն է կիրարկում երկրում ապրող միւս ժողովուրդների նկատմամբ:

Ահա՛ թէ ինչու, շրջանում շարունակ աճում եւ... քարգաւաճում են միապետերը, քանակաւորն ու տիրակալները, Սադդամ Հուսէյնի նման: Պարսից ծոց կայ այնտեղ հակաժողովրդավարութեան համար, որի սնունդը ոչ միայն իսլամական կրօնն է, այլեւ՝ արաբ-խրայելեան հակամարտութիւնը:

Այս իրողութեան մէջ մեղսակցութեան իրենց մեծ քաժիցն ունեն նաեւ աշխարհի մեծ պետութիւններն ու Արեւմտեան... ժողովրդավարական երկրները: Նրանց ձեռնառու է գործ ունենալ նախադրութիւն վրայ նստած միապետերի հետ, կամ իրար միջեւ փաստարկական գզուտողի մէջ գտնուող միանձնեայ լիցերների հետ, քան ժողովրդի իրաւական, օրինական, ներկայացուցչական խորհրդարանական իշխանութիւնների հետ: Նրանց ձեռնառու է երբեմն-երբեմն ապտակ հասցնել այս կամ այն միապետի դեմքին, ցոյց տալու համար, իբր, թէ հարցը չի վերաբերում տուեալ ժողովրդին, այլ՝ տուեալ միապետին: Նրանց ձեռնառու է սաղոյամ հուսելների առկայութիւնը: Նրանք նպաստել են նմանների ստեղծմանը...

Նետաւարար, շրջանում եւ ամէն տեղ կայուն եւ արդար խաղաղութիւն ստեղծելու առաջին պայմանն է ժողովրդավարական կարգերի հաստատումը, ժողովրդավարութեան-ոսմկավարութեան արմատաւորումը: Առանց դրան կարելի չէ կայուն իրավիճակ հաստատել Պարսից ծոցում, կամ որեւէ այլ տեղ:

Միութենական պայմանագիր



գծանկարը՝ Սաքիտա Քրոսայանի

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԸ ՂԵՄ ԵՆ ԳՈՐԲԱԶՈՎԻՆ

Կուզեցի հանցելում մեկօրյա գործադուր, նշանակված է մարտի 4-ին: Դրա մասին «ԻՖ» գործակալության թղթակցին հայտնել է քանվորական կոմիտեների խորհրդի նախագահ Ալեքսանդր Ալյանիդին: Ըստ սրա գործադուրի ընթացքում ծրագրավորված են հետեւյալ պահանջները. ԽՍՀՄ պրեզիդենտի հրաժարականը եւ իշխանության փոխանցումը Ֆեդերացիայի խորհրդին, բանակի, ՆԳՄ, ՊԱԿ-ի, ժողովրդական կրթության համակարգի ապակուսակցականացումը, գրաքննության վերացումը եւ զանգվածային տեղեկատվության միջոցների վերահսկողությունը Ռուսաստանի կողմից, ՌԽՖՍՀ անխարդույնաբերության օժանդակող դրամական հատկացումների տեօրիւնումը Ռուսաստանի կողմից, գնեթի ինդեսավորման օրենքի ընդունումը:

ՔՈՒՎԵՅԹԸ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ Է ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՂԹԵՑԻՆ ԾԱՆՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԻՐԱՔԻ ՎՐԱ

Հինգշաբթի, փետրվարի 28-ի առավոտյան լույս տեսած եւրոպական թերթերը չէին հասցրել հաղորդելու լուրը. նույն օրն առավոտյան, Գրինվիչի ժամանակով ժամը 5-ին, պրեզիդենտ Զորջ Բուշը, դաշնակից մյուս երկրների պետերի հետ խորհրդակցելուց հետո, հայտարարել էր ռազմական գործողությունների դադարեցումը Իրաքի հարավային սահմանների ամբողջ երկայնքով: Նախորդ 48 ժամերի ընթացքում դաշնակից ուժերը գործնականում ավարտել էին Քուվեյթի ազատագրումը իրաքյան ուժերից, հանդիպելով վերջիններիս շատ քուլ դիմադրությանը: Այդ ընթացքում նրանք դաշնակից ուժերը, հասցրել էին գերի վերցնել շուրջ 165 հազար իրաքցի զինվոր եւ սպա, կործանել ավելի քան 400 հրասայն եւ ռազմական տեխնիկա, տասնյակներով օդանավ եւ ուղղաթիւ: Նրանց առաջապահ ուժերը որոշ տեղերում թափանցել էին իրաքյան սահմաններից ներս, եւ պրեզիդենտ Բու-

շից հրահանգ ստանալու պահին պատրաստվում էին գրոհ տալ իրաքյան «Հանրապետական պահակազորի» վրա: Կրակի դադարեցման որոշումից անմիջապես հետո, հինգշաբթի կեսօրին, գործի լծվեցին դիվանագիտական բոլոր շրջանակները, պարզելով որ Իրաքի իշխանություններն ընդունում էին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի «թիվ 660 որոշումն ու մնացաւ բոլոր որոշումները»: Քիչ հետո, Իրաքի արտգործ նախարար Թարեք Ալիզը տեղյակ պահեց համապատասխան կողմերին, որ իր կտաավարութունը ընդունում է դաշնակիցների պահանջը՝ քարծատիճան զինվորական սպաներից կազմված մի հանձնախումբ առաքելու դաշնակից ուժերի ներկայացուցիչների հետ զինադադարի պայմանների շուրջ համաձայնելու համար: Հաջորդ օրը՝ երեկ, դաշնակիցները կազմեցին իրենց ներկայացուցիչների ցանկը, ուր մյուսների կողքին տեղ գտան նաեւ սիրիացի ու եգիպտացի սպաներ:

Այսօր՝ շաբաթ, երկու կողմերը ներկայացնող հանձնախմբերը կհանդիպեն Քուվեյթ-իրաքյան սահմանի վրա մի վայրում, որոշելու համար զինադադարի պայմանների կատարման մանրամասնությունները, թեւե մինչեւ երեկ ուշ գիշեր իրաքյան կողմը տակավին չէր հայտարարել իր ներկայացուցիչների անունները: Երեկ, երեւանի ժամանակով ժամը 18-ին հայտնի դարձան դաշնակից ուժերի նախապայմանները, որոնք իսկապես ծանր են լինելու Իրաքի համար: Սպիտակ տան քաները Մարլին Ֆիզլոբըրը հրապարակեց դրանք. 1) Իրաքը ռազմական որեւէ զրգուրդ չպետք է ձեռնարկի եւ «Սկազ» հրթիռներ չպետք է

արձակի որեւէ երկրի վրա՝ քանակություններ սկսելուց առաջ եւ հետո:

2) Պետք է ազատ արձակի բոլոր գերիներին եւ արգելափակված օտարերկրացիներին:

3) Սեփական միջոցներով պետք է վճարագրել ծովում եւ ցամաքում եղած ականները:

4) Նյութական հատուցում կատարի իր հասցրած բոլոր վճանների համար, լինի Բուվեյթում կամ հարեւան այլ երկրներում:

5) Պատերազմական տուգանք վճարի դաշնակից երկրներին:

6) Վերանորոգի Քուվեյթի նավթարդյունաբերությանը հասցրած խափանումները:

Ֆիզլոբըրն ավելացրեց, որ ավելի լավ կլինե՛ր՝ եթէ իրաքյան ժողովուրդը ձերբազատվեր Սադդամից, այսպէս սպառնալով շարունակել Իրաքի ռազմատնտեսական շրջափակումը:

ՍԱՂԱՍԸ ՍՊԱՏԱՆ Է ԽՆԴՐՈՒՄ

Ըստ ֆրանսիական անձնանկրի-նակավոր թերթի «Լը Մոնդ»-ի երեկվա համարում լույս տեսած մի տեղեկության, Իրաքի պրեզիդենտ Սադդամ Հուսէյնը այժմիկան իշխանություններից խնդրել է ապաստան տալ իրեն:

ԱՂԵՑ ԳՈՐԲԱՆՆԻ ՀԱՄԱՐ

Հորդանանի Հուսէյն թագավորը երեկ՝ ուրբաթ, ելույթ ունենալով ռադիոյով, Իրաքի պարտությունը համարել է աղետ իր երկրի համար: Միաժամանակ նա ուրախություն հայտնեց Քուվեյթի ժողովրդին՝ երկրի ազատագրման համար, ավելացնելով, որ իր երկիրը միշտ եղել է նաեւ Իրաքի ժողովրդի հետ:

ԲԱՂՂԱԴԻ ՀԱՅԵՐԸ ԿՈՐՈՒՍՏ ՉԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Բաղղադի միջազգային կազմակերպություններից մեկում աշխատող մի հայ պաշտոնյայի համաձայն՝ Իրաքի մայրաքաղաք Բաղղադում ապրող 18 հազար հայերը ցարդ որեւէ կորուստ չեն ունեցել: Իրաքահայ համայնքը քաղկացած է շուրջ 25 հազար անդամներից:

Հավաստիացվում է, որ Բաղղադում ապրող հայերից ոչ ոք վերջին շաբաթներս քաղաքից չի փախել: Սակայն օգոստոսին, Քուվեյթի գրավմանը հաջորդող օրերին, ունենոր հայերը մեկնել են Արեւմուտք, մասնավորապէս Անգլիա, ուր կառավարությունը մեր-

ժել նրանց ընդունել որպէս պատերազմի գաղթական:

Նույն աղբյուրի համաձայն, իրաքյան թեմատարներն ամեն օր Բաղղադ են փոխադրում հաց, սր-նեղամթերք, քանջարեղեն, պտուղ քամանելու համար մայրաքաղաքի եւ նրա մերձակայքի բոլոր քնակիչներին, ներառեալ հայկական ընտանիքները: Հայկական եկեղեցու համալիրը եւ երկու հայկական եկեղեցիները Մ. Երրորդությունն ու Ս. Մարիամը, ոչ մի վնաս չեն կրել դաշնակիցների ուժակոծումներից:

Իթրախտարար ոչ մի տեղեկություն չկա Բասրա եւ Մոսուլ ապրող հայերի ճակատագրի մասին: Իրաքի առաջնորդ Ավագ եպ. Ասատուրյանը փետրվարի 4-ին վերադարձավ Բաղղադ: Ավագ սրբազանը խաղաղության առաքե-

լությանը ելույթա մեկնած քրիստոնեա առաջնորդների հնգանդամ պատվիրակության անդամ էր:

Դեռ մինչեւ վերջերս Քուվեյթում ապրող 8 հազար հայերից պատերազմի սկզբում հազիվ 400-ն էին մնացել: Մնացյալները փախել էին Արաբական Միացալ էմիրություն, Հորդանան եւ Սիրիա: Անցալ օգոստոսից ի վեր փակված է Քուվեյթի հայկական դպրոցը: Այնտեղ սովորող 275 աշակերտները ծնողների հետ ապաստանել են Հալեպ, ուր համախում են տեղի հայկական դպրոցները: Արագ փախուստի պատճառով շատ հայեր լքել են իրենց ունեցվածքն ու խնայողությունները, գործարար մարդիկ եւ սեփականատերերը գրկվել անորոշ կարողությունից:

«ԱՅՈՒ» ԹԵ «ՈՉ» ԽՍՀՄ-ԻՆ ԵՐՕՐԿԱ ԿԱՌՂԱՄԵՆՏՈՒԿԱՆ ԲԱՆԱՎԵՆԵՐ

ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ

... դուրս գալու գործընթացը պիտի իրականացվի ԽՍՀՄ օրենքներին համաձայն



Կա չորս հնարավոր տարբերակ.

ա) ամբողջական անկախություն հռչակել:

բ) անկախությունը որպես գործընթաց իրականացնել:

գ) սպասել մինչև կայսրության փլուզումը և անկախանալ «ինքնիրեն»:

դ) մնալ կայսրության կազմում:

Ձմայած հաճախ են խոսել այն մասին, որ կայսրությունը կանգնած է փլուզման եզրին և որ անկախությունը կարող է գալ ինքնիրեն, հիմա կարծիքս մի քիչ այլ է: Ես տեսնում եմ, որ այսպես կոչված վերակառուցման (գործաշրջված իմաստով) փուլն ավարտվում է և Խորհրդային Միությունը կարծես թե, միտում ունի պահպանվելու: Այնպես որ հուսալի, թե կայսրությունն ինքնիրեն կփլուզվի և մենք դրանով իսկ անկախություն կստանանք, ըստ երևույթի, արդեն իսկ հնարավոր չէ: Այս դեպքում, փաստորեն, երկու վերջին տարբերակները նույնանուն են: Մենք պիտի հրստակ որոշենք, մնում ենք, թե գնում:

Ի՞նչ կտա մեզ մնալը:

Մեր գոյությունն այս կայսրությունում նույնիսկ ավելի վտանգավոր կլինի, քանի որ Մերօրվային հանրապետությունների, Վերստաստանի և Մոլդովայի դուրս գալուց հետո մենք դեռ հանդիման կմանանք մուսուլմանական և սլավոնական շատ քանակով ընդհանուր հանրապետություններին:

Ինչո՞ւ: Կա միտում ստեղծել թղթաբան մի միություն իրր ամբողջական ձևով. կվերանան ազգային հանրապետությունները, դրանց կփոխարինեն նահանգների տիպի կազմավորումներ: Այդ դեպքում էլ կկորցնենք մեր ինքնությունը: Բացի այդ, ընդհանրապես միտում չի նկատվում գնալ դեպի ազատ շուկայական հարաբերություններ: Կառաջանա նոր տիպի ֆեոդալիզմ: Եթե նույնիսկ շուկայական հարաբերություններ ստեղծվեն, ապա դրանք կլինեն միայն հիմնարկությունների, ոչ թե անհատների միջև, և մենք նորից կունենանք ժողովրդի անվերջ լուծակներ, ու որպես հետևանք՝ մեզ քաշ ծանրո նոսնակություն... Մեր կախվածությունը կենտրոնից կլինի զարհուրելի. դրա «լավագույն» վկայությունը փողային ռեֆորմն էր:

Ի՞նչ ենք ստանում արդյունքում:

Ազգային նկարագիրը պահպանել հնարավոր չէ, ոչ էլ տնտեսական լուրջ զարգացում: Այդուրևականոն հասարակություն չի ստեղծվի, չի լինի մշակույթ: Կյանքի ապահովության ու կարգուկանոնի մասին խոսք անգամ լինել չի կարող: Ծիչտ է, միլիոնանոց ճամբարներ դժվար թե նորից լինեն, սակայն կլինեն ձերբազատություններ, կկորչեն մարդիկ: Մոդելը Ղարաբաղն է, եթե այնտեղ կա «կարգուկանոն», ապա այդ տիպի «կարգուկանոն» վաղը կլինի ամբողջ երկրում:

Պարզ է դառնում, որ պետք է դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Ինչպե՞ս:

Հենց հիմա դա անել հնարավոր չէ:

Քայլերը, ըստ իս, հետևյալներն են:

Անկախության գործընթացը կըսկսվի իրականում միայն այն ժամանակ, երբ մենք անցկացնենք հանրապետական հանրաքվե, դրանից հետո պետք է արձանագրել որոշակի կարգավիճակ (եթե, իհարկե, հանրաքվեի արդյունքները թույլատրեն) և հայտարարել ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Պիտի նշեն, որ դուրս գալու գործընթացը պիտի իրականացվի ԽՍՀՄ-ում գործող համապատասխան օրենքների համաձայն, ինչպես էլ որ դրանք վիճաբան են: Միայն այդ դեպքում էլ Խ. Միությունը, և միջազգային հանրությունը ստիպված կլինեն ճանաչել մեր անկախությունը: Ըստ այդ օրենքի՝ եթե մենք այսօր հայտարարենք ԽՍՀՄ կազմից դուրս գալու մեր մտադրության մասին, հանրաքվեն պիտի անցկացվի միայն վեց ամիս հետո, և այդ ժամանակի ընթացքում մենք պիտի անենք տնտեսական և քաղաքական վճռական

քայլեր, որպեսզի կես տարի հետո ժողովուրդը կարողանա կողմնորոշվել կողմ է նա, թե դեմ: Կրկնում եմ, անկախությունը գործընթաց է: Ուզում եմ հիշել Գերմանիայի պրեզիդենտ Ռիխարդ Ֆոն Վայցզելերի խոսքերը՝ ուղղված Գորբաչովին, երբ վերջինս նոր-նոր էր սկսում իր «պրեստ-րոլյան»: Նա ասաց. «Ես ողջունում եմ Ձեր ձգտումը դեպի փոփոխությունները: Դա իհարկե, չի նշանակում, որ Գորբ վերջում կհասնենք նրան, ինչին ձգտում եք: Մակայն ինչ-որ մի բան հաստատ կփոխվի, իսկ դա արդեն լավ է»:

ԱՐԿԱՐԻ ԱՐԳՅԱՆ

... Հայաստանի կոմկուսը սկզբունքորեն պաշտպանում է միութենական դաշնագրի գաղափարը



Հայ ժողովրդի ազգային շահերը պահանջում են, որ Հայաստանի Հանրապետությունը ամբողջապես մասնակցություն ունենա ազգային պայմանագրի նախապատրաստման աշխատանքներին: Դա հնարավորություն կընձեռնի մեր ժողովրդի շահերը ճիշտ ներկայացնելու, մյուս հանրապետությունների հետ համատեղ պայքարելու պայմանագրում իսկապես ինքնիշխան հանրապետությունների նոր կարգավիճակ սահմանելու համար: Այլ բան է, մենք կգնանք ստորագրելու, թե ոչ, քայք պայմանագրի նախապատրաստման աշխատանքներին չմասնակցելը կրպիտ սխալ է: Իհարկե, Միության նոր պայմանագրի նախագծի

որոշ դրույթներ գիշում են 1922 թվականի պայմանագրին, այն կարիք ունի արմատական փոփոխությունների: Խիստ կարևոր է, որ ավելի ընդլայնվի ֆեդերացիայի անդամների ինքնիշխանությունը, հատկապես, հստակ նախատեսվեն դրանց (հանրապետությունների) և Միության լիազորությունների շրջանակները:

Նորագված Միության սուրբկտ պիտի հանդիսանան նաև բոլոր ինքնավար մարզերը և օկրուգները: Վերջիններիս համար դաշնագրում պետք է նախատեսվի միջազգային իրավունքի և ինչու չէ, միութենական սահմանադրությունից բխող այնպիսի կարգավիճակ, որը լիովին հաշվի առնի նրանց ինքնորոշման և ազատ զարգացման իրավունքը, պայմանները քստեղծի ազգի կամ հանրապետության իրավունքների որեւէ ոտնահարում քայքայելու համար:

Հայաստանի կոմկուսը, կոմկուսի կենտկոմը սկզբունքորեն պաշտպանում են միութենական դաշնագիրը կնքելու գաղափարը: Ստեղծված պայմաններում Հայաստանի գտնվելը ինքնիշխան պետությունների միության կազմում անկախության գործընթացի փուլերից մեկն է: Եւ վերջապես, միութենական նոր դաշնագրի ըստորագրման կամ մերժելու հարցը լուծելուց առաջ անհրաժեշտ է ծանրակշռորեն վերլուծել դրա նշանակությունը աղետի գոտու վերականգնման և Արցախի ցավոտ պրոբլեմի լուծման համար: Ես գտնում եմ, որ միութենական նոր դաշնագրին հանրապետության մասնակցության հարցը պետք է լուծվի միայն ու միայն հանրաքվեի միջոցով: Ուստի ոչ ոք, քացի հանրապետության ժողովրդից, չի կարող իր վրա պատմական պատասխանատվություն վերցնել այդ հարցը լուծելու համար:

Ինչ վերաբերում է հանրապետական հանրաքվեին, ապա, նախ պետք է հստակ պատկերացնել թե ինչ հարց ենք դնելու, և որքանով է այն անբազմակից տնտեսական առումով և ի՞նչ են տալու դրա արդյունքները: Դրական արդյունքի դեպքում՝ ի՞նչ ծրագիր մշակենք քաղաքական արդյունքի դեպքում:

ՈՍՅԱՅԵԼ ՂԱԶՄԻՅԱՆ
... նախագահը պետք է գնա Մոսկվա «հակա»առաջարկով, դա կոնֆեդերացիայի առաջարկն է



(...) Հարկավոր է գտնել առնվազն երկու խնդրի լուծումը՝ ենթիա և հաց:

Այսօրվա դրությամբ էլեկտրաէներգիայի 100 տոկոսը քերովի վանիլիով է: Այսօր մենք օրական սպառում ենք մեկ միլիոն կիլոգրամ ալյուր:

Երկունս էլ փաստորեն քերովի են: Երբ դնում էին իմ առջև այդ երկու խնդիրները, ես ելք չէի տեսնում և վարանում էի անկախության հարցում:


Մակայն այն, ինչը անհնարին է լուծել միայնակ, կարելի է լուծել խմբովին: Մենք արդեն ունենք այդ թիւը Խորհրդային Միության մեջ: Դա այն չոք հանրապետություններն են, որոնք, փաստորեն, իրենց վերաբերմունքը հանրաքվեի, միութենական պայմանագրի, փաստորեն անկախության նկատմամբ արդեն արտահայտել են: Նրանք որոշակիորեն գնում են դեպի անկախություն: Ահա մեր թիւը, ինչու՞ փորձենք ամեն ինչ միայնակ լուծել:

(...) Ի՞նձ համար շատ ավելի կարևոր է հարաբերություններ ստեղծել Ռուսաստանի Հանրապետության հետ:

Թիմից պետք է հանվի կեղեքիչ միութենական կառավարությունը...

(...) Խմբովին ենք լուծում այդ հարցերը: Ես չեմ կարծում, որ լավագույն եղանակը «ոչ» ասելն է: Նախագահը պիտի Մոսկվա գնա «հակա»առաջարկով: Դա կոնֆեդերացիայի առաջարկն է: Հենց հիմա պետք է շտապ մշակվեն կետերը, որտեղ առաջինը պիտի լինի այդ կոնֆեդերացիայի սուրբկտներից յուրաքանչյուրի անկախության ճանաչումը:

(...) Մենք չենք կարող ոչ մի քաղաքական հստակ լուծում առաջարկել, քանի չենք լուծել որոշ տնտեսական հարցեր: Կոնֆեդերացիայի դեպքում կարող ենք:



ԱՐՅԱՆ

— Փետրվարի 27-ին, Ասկերա-նի շրջանի Փառնուխ գյուղից Խրամորթ գյուղը տանող ճանապարհին, անտառից, մի խումբ զինված ՕՍՏՆ-ականներ կրակել են ԳԱԶ-53 մակնիշի ավտոմեքենայի վրա: Թափքում գտնվող 32-ամյա Արթուր Բաղդասարյանն սպանվել է:

— 27 փետրվար 1991
Կուսաբերող գյուղի մերձակա-

ջում տեղի է ունեցել պատանդների փոխանակում:

— 28 փետրվար 1991
Ստեփանակերտում տեղի է ունեցել միտինգ (սօց արարողություն), նվիրված Սումգայիթյան իրադարձությունների 3-ամյակին: Մաղիկներ են դրվել Սումգայիթյան զոհերի հուշաքարին:

— 28 փետրվար 1991
Առավոտյան ՕՍՏՆ-ի ջոկատները հարձակվել են Մարտունաչեն գյուղի վրա: Միջադեպին աղբյուրներին կողմից խառնվել են զինվորականները: Կան վիրավորներ: Կոխվել շարունակվում էր մինչև ուշ երեկո:

Մեր սեփ. քղք.

ՊԻԼԻՉԱՆ
ԱՐՄԱՆ ԿՅԱՆԿԻ

Գիլջանի քաղաքային խորհուրդը որոշում է ընդունել դիմել Հա-

յաստանի խորհրդարանին քաղաքի կենտրոնում գտնվող Վլադիմիր Ուլյանով-Լենինի արձանի ապամոնտաժման վերաբերյալ:

ԹԱԼԱՎԱՆԸ՝ ՓԼՈՒԶՄԱՆ ԵԶՐԻՆ

Գիլջանի երկրագիտական քանդարանը գտնվում է վթարային վիճակում: Ձմայած դրան, այն շարունակում է մնալ քաղաքի մշակութային կյանքի կարևոր օջախ: Արտագնա միջոցառումներ են կազմակերպվում, ուսումնական հաստատություններում կարդացվում են գեկուցումներ արվեստի, ազգագրության և հնագիտության թեմաներով, անցկացվում երիտասարդ նկարիչների ցուցահանդեսներ: Թանգարանում հաճախ ցուցադրվում են արվեստի գլուխգործոցներ՝ Այվազովսկու, Գառզուի, Էլզար Ծահինի նկարներ: Այդ նկարները տարիներով պահվում են քանդարանի պահեստներում,

և հազվագյուտ են ցուցադրվում, քանզի շենքի փլուզման վտանգ կա:

Մինչ երկրաշարժը նախատեսված էր նոր շենք կառուցել թանգարանի համար, պատրաստ էր նախագիծը, սակայն երկրաշարժից հետո արդեն ոչ ոք չի ուզում կառուցել ըստ այդ նախագծի, քանի որ այն սեյսմակայունության պահանջներին՝ չի համապատասխանում:

Մեր սեփ. քղք.
ԱՐՄԱԿ ԲՈԶԻԿՍԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԼ ԱՎԱՐՏՎԵՑ

Լուս Անջելես: Այստեղ փետրվարի 21-ից 23-ը անցկացվեց միջազգային գիտաժողով, նվիրված

Հայաստանի տնտեսական վերակառուցման խնդիրներին: Գիտաժողովի մասնակիցների թվում էին Հակոբ Աբխալը, Ռուբեն Թերզյանը, Արմեն Գյոնջյանը, Հայաստանից՝ ԳԽ նախագահի տեղակալ Գագիկ Հարությունյանը, Թաթուլ Մանասերյանը, Արա Մխիթարյանը և այլք:

Հայաստանի փոխնախագահ այսպես արձագանքեց գիտաժողովի աշխատանքի վերաբերյալ. «Գիտաժողովը օգնեց մեզ միմյանց ավելի լավ հասկանալ: Մենք թմարկեցինք զանազան ծրագրեր, որոնք ապագայում իրականություն կդառնան»:

Գիտաժողովում քննարկված մի քանի նյութերի հետ դուք կարող եք ծանոթանալ մեր հաջորդ համարում:

News from AGBU ARMENIA-AID

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ

Մի քանի օր առաջ Նյու Յորքում լույս տեսավ հայկական քարեգործական Ընդհանուր Միության մամուլի ընտանիքի նոր անդամի՝ New From AGBU ARMENIA-AID-ի առաջին փետրվարի համարը, 44 էջանոց և մեծադիր ծավալով: Այն կոչված է միության մյուս օրգանների՝ «Յուշարարի», «Խօսակի», «Շինարարի» և այլոց կողքին անգլերեն լեզվով տեղեկություններ հաղորդելու անգլիախոս ընթերցողներին:

Առաջին համարը քաջավուն է «Շնորհակալություն» վերնագրով մի ընդարձակ տեղեկությամբ, որտեղ մեծ երախտագիտությամբ նշված են Ամերիկայի ու եվրոպական ցամաքամասերից, 5 երկրներից և Մ. Նահանգների 50 նահանգներից Հայաստանի երկրաշարժի հետևանքների վերաբերյալ նպատակով ՀԲԸ Միության միջոցով կատարված բոլոր նվիրատվությունների ցուցակը: Այն ընդգրկում է 32216 անհատների, ընկերությունների և հաստատությունների անունները, հայ թե օտար, նշելով տարաբանությունից նվիրատվության չափը: (Նրանցից առաջին 30 նվիրատուների ցանկը տեսնել կողքի «տուփի» մեջ): Նշվում են նաև այն բոլոր հիվանդանոցները, որոնք ամենաշեղծ հոգատարությամբ խնամեցին և բժշկեցին երկրաշարժից տուժած այն բոլոր հիվանդներին, որոնք տեղափոխվեցին Մ. Նահանգներ:

Այս տեղեկությունից պարզվում է, որ մինչև 1990 հունվարի 31-ը ՀԲԸ Միության միջոցով Հայաստանի օգնության համար հանգանակվել և դրամատանային տոկոսից ազատվել է 10 միլիոն 631 հազար 118 ամ. դոլլար: Այդ գումարներից առ այսօր իրացվել է 6 474 930 ամ. դոլլար՝ հետևյալ նպատակների համար:

Կումայրիի սառցարանի ծրագիր	\$5,037,087
Հիվանդների տեղափոխում	\$ 389,279
Պլաստիկ և վերականգնողական կենտրոն	\$ 137,851
Ամերիկյան համալսարանի ծրագիր	\$ 111,054
Կալիֆորնիայի համալսարանի գյուղատնտեսական ծրագիր	\$ 100,000
Կումայրիի պոլիտեխնիկ ինստիտուտ	\$ 48,107
Միջավայրի ուսումնասիրություն	\$ 35,250
Միացյալ հայկական հիմնադրամին	\$ 56,000
Կումայրիի համար տնակներ, համակարգիչներ և ճարտարապետների ճանապարհածախս	\$ 64,903
«Հույս» ծրագիր	\$ 50,000
Միջուկային էներգիայի հետ մշակութային կապի կոմիտե	\$ 50,000
AID-ի խորհրդատուների ծախսեր	\$ 10,375
Աղմինիստրատիվ մարմին - բժշկական ծրագրեր	\$ 224,081
Հանգանակիչ գովազդներ	\$ 160,943

ՀԲԸ Միության ծրագրերի գործադրման աշխատանքները շարունակվում են:

Արժե ավելացնել, որ ՀԲԸ Միությունը միակն է, որ իր հանգանակած և ծախսած գումարների մասին պարբերաբար և մանրամասն հաշվետվություն է ներկայացնում ժողովրդին՝ ոչ միայն այս առիթով, այլև ընդհանրապես:

Վերոհիշյալ գումարներն ու ծրագրերը միայն նշելու դեպքում, ընթերցողի համար անհասկանալի պիտի մնար, անշուշտ, դրանց ծախսման նպատակահարմարությունը: Այդ պատճառով, նորընծա թերթը տալիս է մանրամասն քաջատրություններ և լուսաբանություններ: Այդ թվում՝ թե երկրաշարժից տուժածներից մի քանի խմբեր ինչպես տեղափոխվեցին ԱՄՆ, որտեղ ստացան բժշկական կատարյալ օգնություն և դարմանում, ենթարկվեցին պլաստիկ ու վերականգնողական վիրահատությունների: Հետագայում նրանք, ինչպես նաև այն հիվանդները, որոնք հնարավորություն չեն ունեցել բուժման մեկնելու ԱՄՆ, նույն բուժօգնությունը կստանան Երևանում, որտեղ մի քանի ամսից իր դռները կբացի ՀԲԸ Միության և վերականգնողական վիրաբուժության կենտրոնը:

Սակայն ովքե՞ր են աշխատելու այնտեղ: Թերթը տալիս է պատասխանը: ՀԲԸ Միության միջոցով Հայաստանից մեյլի համալսարան են ուղարկվել 2 վիրաբույժ, 2 անեսթեզիոլոգ, 7 բուժքույր և 1 քիմիկոս, որոնք այնտեղ մասնագիտանալուց հետո կվերադառնան Երևան, պլաստիկ վիրահատության կենտրոն, որտեղ առաջին շրջանում կաշխատեն նաև ամերիկացի մասնագետներ: Այս ծրագրի նախագահն է Ջավեն Դադեբյանը, տնօրենը՝ Ռեջինա Օհանյանը:

ՀԲԸ Միության մեծածախ ծրագիրը, սակայն, մնում է այժմ Կումայրիում դադարեցրած մասնագետների կողմից կառուցվող 10 հազար տոննա տարողությամբ մթերային սառնարան-գործարանը՝ ՄԱԿ-ի UNIDO կազմակերպության հովանու տակ: Այն կօգնի հյուսիսային Հայաստանին՝ ժամանակին մթերելու գյուղատնտեսական արտադրանքը և դժվար ամիսներին ազդարանակցությանը սպասարկելու: Այս ծրագրի պաշտոնական խորհրդատուն է Ջոն Գուլաջյանը:

ՀԲԸ Միության կարևոր ծրագրերից է նաև Հայաստանում անբիկյան համալսարանի ստեղծումը, ուր մասնագիտանալու են քիմիկոս, սեյսմոլոգիայի, ճարտարագիտության և համակարգիչների գիտության ճյուղերում: Այս ծրագրի համար ներկայումս Կալիֆորնիայի համալսարանում մասնագիտանում են մի խումբ երիտասարդներ, որոնք վերադարձին դասախոսելու են նորաստեղծ համալսարանում: Մրագրի նախագահողներն են՝ դոկտ. Միհրան Աղաբաբյանը, Ստեփան Կարամարտյանը և Արմեն Տեր-Կյուրեղյանը:

Չորրորդ և նույնքան կարևոր ծրագրերից է գյուղատնտեսական, որը դարձյալ Կալիֆորնիայի համալսարանի համագործակցությամբ է իրականացվում: Այդ ծրագրով սննդամթերքների, կաթնամթերքի և մսեղենի վիճակն անհամեմատ քարելավվելու է Հայաստանում: Ուսումնասիրելով Հայաստանի գյուղատնտեսության վիճակը, վերոհիշյալ համալսարանի մասնագետները նկատել են, որ մշակման, քերթահավաքի և պահեստա-

վորման ընթացքում լինում են մթերքների 30 տոկոսի կորուստ՝ չրի անբավարար մատակարարման, ցամաք, հնձման պրոցեսների թերությունների պատճառով: Մրագրի պատասխանատուներն են Ուտլոդը Բարամյանն ու Գեորգ Սանթրիկյանը:

Թերթում տեղ է հատկացվել նաև աշխարհի տարբեր մասերում ՀԲԸ Միության կենտրոնների գործունեության որոշ կողմերին, որոնց շարքում՝ հայաստանցի երեխաների ստեղծագործությունների՝ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներին: Առանձին հոդված է հատկացվել նաև նահանգապետ Ջորջ Դոքսեյանի պատվին ՀԲԸ Միության կազմակերպած շնորհակալության ձեռնարկին, Լուս Անջելեսում:

Ինչպես կարելի է նկատել, նոր պարբերաթերթը գալիս է լրացնելու մի կարևոր քայլ. անգլիախոս ընթերցողներին ծանոթացնել սփյուռքահայ մեծագույն քարեգործական կազմակերպությունների գործունեությանը:

ԿԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱԿԸ

Մանուկյան ընտանիքի և «Մասր» ընկերություն	\$1,540,418
Հատուկ Գարակտյանի անվան ընկ.	\$ 750,000
ՀԲԸ Միության Ֆրանսիայի շրջանակային վարչություն	\$ 300,000
Տիկ. Լեյլա Գարակտյան	\$ 253,721
Armenia Aid	\$ 250,000
Դոկտ. և Տիկ. Բաֆֆի Հովհաննեսյան	\$ 100,000
Տեր և Տիկ. Մարք Մարքարյան	\$ 100,000
Տեր և Տիկ. Նազար Նազարյան	\$ 100,000
Տեր և Տիկ. Ռուբեն Թերզյան	\$ 64,960
Տիկ. Իզաբել Արամյան-Հոնոլոլու	\$ 50,000
Հայկական Մշակութային Հիմնադրամ	\$ 50,000
Դոքսեյանի ընտանիքի կոմիտե	\$ 50,000
Ուտլոդը կապային ընկ.	\$ 50,000
Նիու Միլֆորդի հայկական համայնք	\$ 43,916
Պոլսահայերի կազմակերպություն	\$ 40,000
Կալիֆորնիայի ՀԲԸ Միության Մանուկյան դպրոց	\$ 34,206
Պարսկա-հայկական ընկ.	\$ 33,105
Տիկ. Բեաթրիս Փոլ	\$ 29,553
Բիսմահամիտների հայկական համայնք	\$ 27,508
Օրեգոնի հայկական համայնք	\$ 26,943
Արևո հիմնարկություն	\$ 25,000
Բյաբուել Լանդ ընկ.	\$ 25,000
Բրիտանացիների անալիզի և կենդանի	\$ 25,000
Տեր և Տիկ. Մարգի Գարբիելյան	\$ 25,000
Գառնիկ քահանա Հալաբյան	\$ 25,000
Տեր և Տիկ. Ջորջ Մանուկյան	\$ 25,000
Դեպոտի Ազգային Բանկ, Գթության բաժին	\$ 25,000
Իվ Նուրար ունեցվածք	\$ 25,000
Տեր և Տիկ. Արամ Մեմերջյան	\$ 25,000
Փիթեր և Էլիզաբեթ Թորոսյան հիմնարկություն	\$ 25,000

և այս շարքը շարունակվում է մինչև 32216-երորդը: Նշվում են նաև այն հիվանդանոցները, որոնք ամենաշեղծ հոգատարությամբ խնամեցին երկրաշարժից տուժած բոլոր այն անձանց, որոնք տեղափոխվել էին Միացյալ Նահանգներ, բուժման:

Հալեպահայ Նամականի

Հալեպի հայ գաղութի պատմությունը կու գալ նախորդ դարեր: Այս գաղութը կը տարբերի միս գաղթածայիններն իր խոր առնդապաշտութեամբ: Նոր Տարուայ, Սուրբ Մնուկի, Բարեկենդանի, Տեառն ընդառաջ և Սուրբ Վարդանանց տոները մեծ ոգևորությամբ նշուեցան մեր գաղութը ներս:

Հակառակ Պարսից ծոցի պատերազմի հետևանքով ստեղծուած սուր վիճակին, մշակութային կենտրոնը մնաց աշխույժ: Ծուռուար ամսուն, Հալեպի մէջ տեղի ունեցան երկու հետաքրքրական ձեռնարկներ հայ երիտասարդներու ապագային առնչուող հարցերու շուրջ:

Առաջինը կազմակերպուած էր Սուրիահայ համալսարանաւարտներու միութեան կողմէ. հովանաւորութեամբ Հալեպի առաջնորդ Սուրեն եպս. Գաթարոյեանի: Վիճարանական ատուլիսի միջոց էր «Համալսարանական վկայականը նժարի վրայ»: Իրենց մասնակցութիւնը բերին սուրիահայ համալսարանաւարտներ Մանուէլ Խակեմտէրեանը (ատամնաբույժ), Ազնի Եագուպեանը (իրաւաբան), Գրիգոր Աթաբեանը (ճարտարապետ), Արմեն Գասպարեանը (դեղագործ):

Երեկոյի ընթացքին արժարժուեցան այն միաբանութիւնը քերտույս-

կան հարցերը որոնք կը մտահոգեն հայ համալսարանաւարտը: Երկրորդը՝ Թեքեան մշակութային միութեան Տեղական վարչութեան կազմակերպած հարցազրոյց ձեռնարկն էր, միջոց «Կենցաղ մէջ երիտասարդի մը յաջողութեան գերաւականները»: Ելուք ունեցան Արմենակ Տիրատուրեանը (կենսաբան) և Հայր Թարութիւն Պապիկեանը (հոգեբանական-արուեստագետ):

Մեր գաղութին մէջ աշխույժ դեր ունի Թեքեան մշակութային միութեան Տիկնանց յանձնախումբը, որ դաստիարակիչ ձեռնարկներով մօտեն կը հետաքրքրուի հայ կնոջ զարգացմամբ: Զարգացնել հայ կինը և մայրը զարգացած սերունդներ ունենալու համար: Այս մը տարհոգութեամբ է, որ Տիկնանց յանձնախումբը որոշած էր իրագործել բժշկական դասախօսութիւններու շարք մը, որուն առաջին երկուքը կատարուեցան փետրուար ամսին: Ծաղրդարար դասախօսեցին քաղցկեղի մասնագետ բժիշկ Ժան Տեմիրեանը և մաշկային մասնագետ բժիշկ Հրայր Պալապանը:

Թատերական կենցաղ ալ շուտով կը սկսի աշխույժանալ: Ծառաշիկայ ամիս Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. Այսմեան թատերախումբը բեմադրի ծարտիւն Ջննդեանի գըլխատրութեամբ կը ներկայացնէ նոր թատերգութիւն մը: Գաղութին կենտրոնը կը շարունակուի:

ՈՐՈՇԻ ԱՆՄԵՆԱՆ
Հալեպ

ՄՓՅՈՒՌՔԱՅԱՅ ԼՈՒՐԵՐ

— ԼԻԲԱՆԱՆԻ, հանրապետության նախագահ Էլիաս Հրաուին 17 փետրվար 1991-ին քաղաքավարական այցելություն է տվել Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ին, Անթիլիասի մայրավանքում: Միալի ընդունելությունից և մտերմիկ խոսակցությունից հետո հանրապետության նախագահը դրվատալից խոսքեր է ասել լիբանանահայության հասցեին և անդրադարձել Լիբանանի միության գծով հայ համայնքի մատուցած անգնահատելի ծառայությանը:

Ընդունելությանը ներկա են եղել միաբանության անդամներ, հայ նախարարներ և երեսփոխաններ, հայ ազգային երեք կուսակցությունների ներկայացուցիչներ:

— ԲԵՅՐՈՒԹՈՒՄ լույս տեսնող «Շիրակ» գրական-գեղարվեստական ամսագիրը վերջին 1990 հունիս-հուլիս համարն ամբողջությամբ նվիրել է սփյուռքահայ գրող և հրապարակագիր Անդրանիկ Մառուկյանին, նրա մահվան առաջին տարեկիցի առիթով: Թեքեան մշակութային միության պաշտոնաթերթը իր վերջերս հրատարակված այդ համարի բոլոր 128 էջերի մեծ մասը նվիրել է «Մանկություն չունեցող մարդը» գրքի հեղինակին, ներկայացրել քաջամարտիկ էջեր նրա անտիպ և մամուլում լույս տեսած գործերին: Նրա հիշատակին հողվածներ են ստորագրել մեկ տասնյակից ավելի սփյուռքահայ գրողներ և հրատարակիչներ:

«Շիրակ» ամսագիրն իր նախորդ երկու համարները, դարձյալ մեծ ծավալով, նվիրել էր Եղեռնի 75-ամյակին և լիբանանահայ արձակագիր Արմեն Դարչանի հիշատակին:

— ԿԱԼԻՖՈՐՆԻԱ «Չալկոսկի» թատերասրահում հունվարի 6-ին տեղի է ունեցել Հայ գեղարվեստախրաջ միության ավանդական փառատոնը, մասնակցությամբ ՀԲԸ Միության «Կառույց» երգչախմբի, Ալեքսանդրիայի ՀԲԸ Միության «Գարուն» երգչախմբի, «Չանգեզուր» պարախմբի, «Հասաջադիմաներ» մշակութային միության և «Հուսարներ» երիտասարդական մշակութային մարմնի անդամների: Առանձին խոսքով հանդես են եկել Բրիժիտ Գալլուցյանը, Նվարդ Զոնոյանը, Կարո Կարապետյանը: Հանդիսավորել է Գրիգոր Մարգարյանը: Բացման խոսքն արտասանել է թեմի առաջնորդ Ջավեն արք. Ջինյանյանը:

— ԳԼԵՆԴԵՆԻ Հայ դատի հանձնախումբը հաստատարել է, որ մի անհայտ նվիրատու 125 հազար դոլլար է հանձնել իրեն, խնդրելով, որ այդ գումարը ծախսվի հատկապես թրքական հակահայ քարոզչության դեմ պայքարելու նպատակով:

— ՓԱՐԻՉՈՒՄ, Հայ նախկին ուսանողների, կամավորների և ֆրանսիական Դիմադրության շարժման ընկերակցությունը փետրվար 24-ին ոգեկոչել է Մ. Մանուկյանի և ընկերների հիշատակը, նրանց նահատակության 47-րդ տարեկիցի առիթով: Երթ է կատարվել Իվրի գերեզմանատուն, տրվել հոգեծառ:

— ՓԱՐԻՉԻ Հայ մշակութի տանը փետրվար 20-ին տեղի է ունեցել դասախոսական հանդիպում՝ «Հայ մտավորական պատմությունը 19-20-րդ դարերում» թեմայով, որը ներկայացրել է սփյուռքահայ գրող և ըննադատ Վահն Օշակյանը:

ՆՈՐԱ ՄՐՄԱՆԻ.

«ԱՅՊ ԷԼ ԿԼԻՆԻ ԿԱՄՐՋԻ ԻՍ ՄԱՍԸ»

-Հայրենիք-սփյուռք հարաբերությունների քարտեզագրության մեջ գնալով նորանոր սպիտակ բծեր ենք հայտնաբերում...

Ու ցավոք, իմ առաջին խնդրանքը պիտի լինի ներկայանալ, պատմել Ձեր մասին:

- Լուս Անջելու կայրիմ, կաշիաբանական ամերիկյան թափոններում, կինոյին ու հեռուստատեսությանը: Ինչպես նաև, որ վերջերս համախառն չէ, բայց ժամանակի ընթացքին հայկական բնագործություններու մաս կազմած է:

Մասնագիտությամբ նախ եղած էմ ընկերաբան (սոցիոլոգ) և այդ ճյուղում ունիմ բնագործական ապրիման (կրթություն ստացած էմ Լոնդոնի համալսարանում): Բայց միաժամանակ շարունակած էմ թափոնական գործունեությունը, աշխատած էմ փարբեր թափոններում: Ու մի 6-7 փարի առաջ որոշում ընդունեցի և իմ ընկերաբանական աշխատանքները մի կողմ թողեցի:

Վերջին մի քանի փարիների կարևոր գործերից մեկը եղավ «Արարաթի կայքը» ներկայացումը, որ ժիբրայր Փափազյանի՝ ամուսնուս հետ էինք բնագործը:

ժիբրայրի հետ իմ համագործակցությունը՝ լինի անձնական, քե արվեստի գեղանի վրա, շար վազուցվանից է: Մենք հանդիպել ենք դեռ Երևանում, Կահիրեի Գեղարվեստափրացի բնձի վրա: Այդ ժամանակ ինքը սովորում էր Կիարոսի Մելգոնյան վարժարանում և ամեն ամառ մի բնագործություն էր անում, իսկ ես՝ 14-15 փարեկան, խաղում էի այդ բնագործություններում: Հետո ժիբրայրը սովորեց Երևանի գեղարվեստափրակական ինստիտուտում և այդ օրերին էլ միշտ աշխատակցում էինք: Հանկարծ անգրադարձանք, որ լավ կլիներ արվեստը և կլանքը միացնել: Նույն ֆիլմերի մեջ չենք եղել, բայց շար անգամ միասին աշխատակցում ենք՝ ինչպես «Արարաթի կայքում» էր:

Մրանով առաջին անգամ հանդես եկանք Էդիբերդզի փաստագրում: Բնագործությունը հիմնված է հայ բանաստեղծության 40 փարեր կտորների վրա: 400 կտոր ունենիք թարգմանած ու դժվար էր չէինք իմանում, քե ինչ ենք պարմելու, ասելու: ու, չէինք ուզում, որ նորից կտրծք ծնծելու, շարդերի մասին ողբալու կտոր լինի, հակառակ, որ վերջում անկարելի եղավ խուսափել դրանից, որովհետև անգրադարձանք, որ մեր բանաստեղծության զգալի մասը այդ է: Եւ ուղղակի կարդացինք ու թողեցինք, որ բանաստեղծություններն իրենք իրենք պարծությունը պարմեն, քե ինչ ունենիք որպես հայ կամ որպես մարդ արարածներ, ինչ է կորսել կամ մեզանից խլվել ու քե ինչ ենք հնա փնդրում, դեպի ուր ենք ձգվում:

Երկու փարի շարունակ բնագործության, սերնդագործության ու խաղարկության համար մրցանակներ շահեցանք: Այս ներկայացումով բավականին շրջանից աշխարհում միայն Ավստրալիայում՝ Սիդնեյի օպերայի շենքում 1800-1900 հանդիսարեսի ներկայացմամբ խաղացվեցավ: Վերջերս, ֆրանսերեն փարբերակով կշրջինք: Մայիսին ու հունիսին՝ Ղվիցերիայում, Լիոնում, իսկ հուլիսին էլ պիտի Ավիյոնի փաստագրին մասնակցենք այդ ներկայացմամբ:

- Իսկ օտար հանդիսատեսն ինչպե՞ս է ընկալում հայ բանաստեղծությունը: Թարգմանությունը, եթե չասենք սպանում, ապա նվազեցում, կորցնում է բանաստեղծականությունը:

- Այո: Մեզ համար էլ էր շար հեղաքրքրական փնսնել, քե ինչպես պիտի սփայնի: Երբ ժիբրայրի հետ թարգմանում էինք, մտածում էինք, քե արդյոք ոչ հայախոս հայը կամ բոլորովին օտարը ինչպե՞ս պիտի ընկալի: Բայց արդեն Էդիբերդզում պարզվեց, որ մեր ներկայացումը ավելի համապարփակ իմաստ, բովանդակություն ունի, քան կարծում էինք: Մենք, համեմայն դեպ, ենթադրում էինք, որ ավելի շար հայերին կհեղաքրքրենք: Որ էլ գնացինք՝ մեծ մասամբ մեր հանդիսատեսը եղավ օտարը: Իսկ ոչ հայախոս հայերը՝ Չիկագոյում մի երիտասարդ ամերիկոսի-հայ ծոբենալով մեզ ասաց. «Ես այս գիշեր փուն գնալով անմիշտակա պիտի սկսեմ հայերեն սովորել, որովհետև ուզում եմ այս բանաստեղծությունները իրենք բնագործելով կարդալ»: Ուրիշ մի փարիցով կին, որ Ֆրեզոնում մեզ հանդիպեց՝ «Դուք այս գիշեր իմ կյանքը բոլորովին փոխեցիք: Ես ամուսնացել եմ հայ մարդու հետ, որ շարդերն է վերապրել և ոչ մի կերպ չեմ կարողացել մինչև հիմա հասկանալ նրա ցավը, իրարանցումը, վիշտը: Դուք այս գիշեր այդ բոլորի վրա լույս սփռեցիք»: Մեզ համար արդեն այդ մեծ գոհունակություն էր:

- Ուրեմն ու՞մ է հասցեագրված Ձեր արվեստը: Նպատակը հայ բանաստեղծությունը միջազգային ասպարեզում ներկայացնելն էր, քե՞ ակունքներից հեռացած, ուժացած մարդկանց դարձի, արմատների թերեւը, արյունը արթնացնելը:

- Երևի երկուսն էլ:

Մեր մարզը, թափոնն է և անշուշտ կուզենայինք թափոնով միջազգային ասպարեզ մտնել, բայց դժբախտաբար՝ մեր թափոնական արվեստն այդքան զարգացած չէ, ինչքան բանաստեղծությունը: Ուրեմն՝ խորհեցանք առաջին հերթին առհասարակ միջազգային շուկա ինչնցին հայ բանաստեղծությունը, ու հետո սփայնեց այդ հեղաքրքրի ու բաղձալի ուղղվածությունը: Հիմա արդեն ամենաշատը դա է մեզ հուզում՝ Հայաստանը, հայությունը զգալի ու բաղձալի դարձնել:

- Դուք նշեցիք, որ մեր թատերական արվեստն այնքան էլ զարգացած չէ: Օտար երկրի միջավայրում ծնավորված, դրա ծնունդ արվեստագետի ստեղծագործությունը, վաստակն էլ պատկանում է այդ երկրին ու դրա մշակույթին: Ինչպես ասենք՝ Ազնավուրը, Ժանսենը, Գառզուն պատկանում են ու հարստացնում են Ֆրանսիայի մշակույթը: Չարմանալի է, քե ինչպե՞ս եք ազգային թատերական ավանդույթների գրեթե չգոյության պայմաններում, օտար միջավայրում հայկական բնագործություններ անում:

- Մենք ակունքները գրանք բանաստեղծություններում: Բայց, համեմայն դեպ, ավելի շար բաղում ես քո զգացումներից, անձից:

Իհարկե, երբ մի երկրի արվեստագետն էս՝ ուզես, քե չուզես՝ եթե ամբողջ երկիրը մի կերպ է մտածում, իր արվեստն ու մշակույթն ունի և դու հանկարծ ուրիշ բան անես՝ կճանա դրսում: Ինչքան էլ քո՝ ասելիքը ունես՝ պիտի դնես այդ մեկի մեջ, որպես արհեստավարժ (պրոֆեսիոնալ) դերասաններ՝ չենք կարող հայկական թափոնով գործարել: Չի կարելի համայնքային վիճակի մեջ, փարին մի ներկայացում անելով քեզ արհեստավարժ սնվել և այդ մեկով գնալ առաջ: Մյուս կողմից էլ՝ հակառակ պարկերն այն է, որ բոլորովին կորվելով հայկականից՝ գնաս ամերիկյանի ճանապարհով (խաղաս անգլերեն և այլն):

Հիմա մեր ներկայացումը կամուրջ էր, այս երկուսի համաբերումը, որ չէր մնում միայն հայկականի մեջ, բայց իր ակունքները հայ



ասպարեզ: Որ որեւէ հայ դերասան, գրող, նկարիչ, արվեստագետ Հայաստանում չգրա, քե ինքն աշխարհից դուրս է ընկած:

Մա պիտի իմ կյանքի նպատակը դառնա: Չգիտեմ, քե իմ կարողություններով կկարողանա՞մ անել այդ, բայց շար եմ ցանկանում լինել այդ կամուրջը... Հայաստանում պայմանները փակվին այնպիսին չեն, որ արվեստագետները կարողանան ազատ գնալ-գալ, շփվել, մտքեր փոխանակել, իրենք արվեստը հրաձգելով դրսում: Պետք է վերափոխել այդ: Մենք՝ արտասահմանից հայ արվեստագետներս էլ պիտի հաճախակի գանք: Այս շարժը շար կարևոր է. մինչև հիմա սրա լուծումը եղել է կամ բոլորովին գնալը, կամ մնալը:

- Իսկ կոնկրետ ի՞նչ միջոցառումներ, ծրագրեր եք նախատեսել:

- Իմ հնարավորությունների մեջ «Արարաթի կայքը» որոշ առումով առաջին քայլն էր: Դրա շար կարևոր մի մասը Հայաստանի ժամանակակից բանաստեղծներն են՝ Էմին, Կապուրիկյան և այլք:

Հետո, վերջին շրջանում ես ավելի ֆիլմի աշխարհում եմ: Բավականին մարդկանց եմ ճանաչում, որոնք ունեն իրենք ընկերություններ, ֆիլմի արտադրիչներ կամ բնագործիչներ են: Այսօրից գնալով՝ պիտի այդ մարդկանց հեղաքրքրեն Հայաստանում նկարահանումներ կատարելու: Մինչև հիմա դրանք կատարվում են Հարավայվալիայում կամ ուրիշ երկրներում... նյութական նկարառումներով դրանք ավելի շահավետ են, քան Ամերիկայում: Ինչու՞ այդ երկրներից մեկն էլ Հայաստանը չլինի: Ահավասիկ, այս բոլորի դուրը բացվեց ու եղավ առաջին քայլը:

- Պատմեք խնդրեմ, Ձեր այստեղ գտնվելու շարժառիթի մասին, որն, իսկապես, անշուշտը հարթահարելու առաջին քայլերից է:

- Մենեկային (կամերային) թափոնն առաջին ֆիլմն է նկարահանում «Ժամկետը 7 օր» անունով: Արա Երեզկյանն ինձ առաջարկեց գլխավոր հերոսուհու դերը: Ու երևի իմ այսօրվ լինելն, այս անգամ որպես արհեստավարժ դերասան, որ հրավիրված է հայկական ֆիլմում նկարահանվելու, առաջին դեպքն է: Շար ուրախ եմ, որ ես եմ այդ առաջինը:

Այս ֆիլմի միջոցով ժանոբացա շար խորը, խենք ու իրենց գործը կամերան, բնագործությունը, փնսնիկան, շար լավ իմացող արվեստագետների: Եվ հիմա սիրոս շար հանգիստ կարող եմ բարեկամներին համոզել, որ այսօրվ գան նկարելու: Ինքս էլ մի ուրիշ ծրագիր ունեմ ֆիլմի առումով:

- Դրա մասին, եթե կարելի է, քիչ հետո: Արա Երեզկյանի ստեղծագործությունը կարծես «երեսնյան օրերի ժամանակագրությունն» է: Ուրեմն պետք է ենթադրել, որ Դուք բավականին իրագե՞լ եք հանրապետության ներքին անցուղարձին:

- Անշուշտ, չեմ կարող ասել, որ շար լավ ծանոթ եմ. դրա համար հարկավոր էր այս երեք փարին երեսնում լինել: Իսկ ես 1987-ի նոյեմբերին էի այստեղ: Ծիշք է, դա այն շրջանն էր, երբ երկու՝ գոյապահպանական ու Արցախի ցույցեր էին եղել ու արդեն դրանք ին՝ համար շար մեծ իրադարձություններ էին: Էմինի փանք խոսում էինք դրա մասին... Հույս ունեի ավելի շուր վերադառնալ:

Հիմա չեմ ուզում ասել, որ ամեն ինչ նորմալ է, որովհետև... Բայց զգում եմ (շար բարդ բան է այս), որ ամեն ինչ նորմալ է հենց իր աննորմալ վիճակում: Երեք փարի առաջ չի գզում, որ Հայաստան եկած եմ ու չի պարկերացել, որ նույնիսկ երեք փարում այսքան փոփոխություններ կլինեն: Անգամ մարդկանց հետ խոսակցություններից ես զգում, որ արդեն ճանապարհ ենք ընկել ու գնում ենք դեպի լավը: - Շարուն կա...

- Շար ուժեղ: Ու դրա արագացումները զգացում եմ արվեստում (ես դրանով եմ չափում իմ հարազատ միջավայրով): Միգուցե երեք փարի առաջ ես այն շրջանակների հետ չեմ շփվել, ինչ հիմա... Շար փրսած էի արվեստի վիճակով: Այնքա՞ն ցավ էի զգացել: Մենք Հայաստանին որպես ակունք ենք նայում, և կարծում էինք, որ մեր մարզում այսօրվ շար ավելի լավ պիտի լինի, սակայն հուսախար եղած էի: Այս անգամ բոլորովին այլ էր:

Բայց հիմա մի ավելի վար բան կա: Առևտրական մտածելակերպը արվեստի մեջ: Սակայն դա կանցի, կգնա... - Հիմա, խնդրեմ, պատմեք ապագայի Ձեր ծրագրերի մասին, եթե գաղտնիք չէ: Խոսում էիք նկարելիք ֆիլմի մասին...

- Գաղտնիք չէ, բայց միևնույն ժամանակ ինձ համար էլ դեռ շար հարակ չէ ու շար բաներ չեմ կարող ասել: Մա մի ծրագիր է, որ մի քանի փարի է, ինչ մշակում ենք ու մի կողմ էի գցել. մեր ներկայացումը ֆիլմի վերածելն էր: Նկարահանումների մեծ մասը, իհարկե, այսօրվ պիտի արվի: Չի կարողանում պարկերացնել, քե ինչպե՞ս կարող եմ գուլիս հանել, ովքեր կլինեն այդ անձերը, որոնք հետ պիտի աշխատեն: Կա՞ն մարդիկ, որոնք հետ կարող են լեզու գրելի՞ արվեստի կամ մարդկային առումով: Այս արդեն ազոթ նկարը վերջերս նորից մեջտեղ ելավ: Հանկարծ իմ ճամփորդության ու աշխատակցության ընթացքին անգրադարձա, որ շար էլ կարելի է, այո՞, կարելի է: Հիմա արդեն խոսում եմ, միաբան վիճակ կա, շար էլ դյուրին է լեզու գրելը... Երևի կարելի կլինի:

- Ուզում եմ չհավատալ, որ հայ արվեստասերների ծանոթությունը Ձեզ հետ այդ ֆիլմով է կվարտվի...

- Հուսով եմ ես ալ, որ Մայր Հայրենիքում աշխատելու վերջին առիթը չէ այս:

Հարցազրույցը վարեց ԱՆՆԱ ԻՍՐԱԾԵՆՅԱՆԸ

ԿՈՎԱՐՍՐ ԾԵՐԸ

Թվում է, քե Շերը հարկադրված է միշտ շրջապատված լինել կատաղի փոթորիկներով: Միացյալ Նահանգներում սովորական երեւույթ է տեսնել նրա չարանճի դեմքը առնվազն մեկ ամսագրի կազմի վրա տարբեր վերնագրերի տակ՝ «Կատաղի Շերը», «Ամուսնաթող Շերը», «Շերը օրորոցագող» և այլն:

Ավստրալիա հյուրախաղերի մեկնելուց առաջ Շեր-երգչուհին ունեցավ մի քանի փայլուն դերակատարումներ և որպես Շեր-դերասանուհի վաստակեց Օսկար մրցանակը:

«Ես լուրջ դերասանուհի եմ, բայց Մերիլ Սթրիփը չեմ, ոչ էլ Միսսի Սփասեքը կամ Ջեսսիքա Լանգը... ատում է նա: Մարդիկ կարծում են, որ լուրջ անմիջը պետք է որոշակի ծնով հագնվեն և համապատասխան մարդկանց հետ հանդիպեն»:

Շերը մեկ անգամ է դատարան դիմել իրեն գրավարտելու համար և շահել այդ գործը:

«Ես իսկապես հոգնել էի այդ անձինք, - ատում է նա: - Իմ փաստաբանն ասաց, քե ես ի վիճակի չեմ լինի շահել այդ դատական գործը, բայց ես շահեցի այն: Բուլվարարային լրագրերը միշտ փնտրում են նշանավոր անձանց, որպեսզի միշտ գոյացունց լինեն»:

«Սակայն մենք չենք կարող միշտ գոյացունց լինել: Ուստի, դրանք պարզապես ամեն ինչ հորինում են: Մի լրագրում գրված էր, քե ես քղալվել եմ Էդդի Մերֆիի վրա՝ Օսկար ստանալու ժամանակ, որովհետև նրա մեկնաբանությունը Հոլիվուդում տիրող ռասիզմի վերաբերյալ մտահոգել է ինձ: Բայց ես երբեք այդպիսի բան չեմ ասել: Մի քանի օր անց ինձ զանգահարեց Քիլ Քոսթին, ուրիշ գայտագրել էր իմ վերաբերմունքը Էդդի Մերֆիի նկատմամբ: Ես սիրում եմ Քիլին և դա ինձ ցավ է պատճառում: Փաստը այն



է, որ նա մոռացել է, որ լրագիրն է երել այդ կերծիցի աղբյուրը»:

35 տարեկան հասակում Շերը հրաժեշտ տվեց Լաս Վեգասին, որտեղ նա մասնակցում էր շուր ծրագրերին, և մեկնեց Նյու Յորք՝ հույս ունենալով լուրջ դերասանուհի դառնալ: Ռոբերտ Ալթմանը ծիշտ այդպես էլ վարվեց: Նա Շերին դեր առաջարկեց մի ներկայացման մեջ, որի համար Շերը ըստ Բրոդվեյի սանդղակի ստացավ 500 դոլար: Այդ օրվանից հաջողություն հաջորդեց - հաջողությամբ, քեպետելու դերասանուհին ոչ միշտ էր արժանանում գնահատության:

Չնայած այն քանին, որ Շերը արժանացավ կաննում անցկացվող կինոփառատոնի լավագույն դերասանուհու այնքան ցանկալի մրցանակին, Օսկարի կազմակերպիչները անտեսում են նրան:

Հետագայում Շերը վերջապես ճանաչում ստացավ: Նրա փայլուն դերակատարումը «Խելագարվածը» ֆիլմում արժանացավ Օսկարի:

Այժմ մենք ակնկալում ենք նրան հանդիպել «Մովանուշներ» ֆիլմում վիճակա Ռայդերի մոր դերում: Շերը դեռ կովարս է, սակայն նրա տաղանդը արդեն չի անտեսվում:

«ՆՈՒ ԱՅՊԻԱ»

ԵՐԿՊԻՄԻ ԹՈՒՐՔԻԱՆ ԻՐ ԹԱԹԱՆՅԻԿ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐՈՎ

Մոցի պատերազմն ի վեր թուրքիան ոչ միայն կը խաղայ ճարտար դերասանի մը իր թուրք ֆուլկուրիստներով, այլև հետամուտ է առաելագոյն չափով օգտագործելու իր աշխարհագրական դիրքը, իր արուեստական անկողմնակալութիւնը եւ իր քաղաքականութեան յատուկ մանուածապատուիւնը:

Թուրքիան եւ իր վարիչները քաջատեղեակ են անցողորմերու ներքին ծայքերն ու ինքզինքնին «երաշխատուած» կը զգան, որ թէ՛ միաբալտ, թէ՛ զինուորային եւ թէ՛ հողային առումներով իրենց համար հիանալի առիթներ ընծայուած են այս քառսէն դուրս գալու յարթական, հասնելու իրենց գերագոյն նպատակներուն, նուաճելու նոր շահույթներ, թէկուզ՝ ուրիշներու հողին թէ արիւնին զոնով:

Իրենց համար սովորական ոճ մը, որ ատենին եթէ կը գործուէ իրենց ձեռքերն ու քաջայայտորէն, այսօր կը կենսագործուի դաշնակցներու կողմէ, քողարկուած ձեւով, քայքայ իրենց անձնական շահույթներուն ի վարձատրութիւն:

Արդարեւ, թուրքիոյ սահմաններն Իրաքի դէմ ճակատ քանալու իր երկրորդ քաղաքականութեան, պատերազմն վնասողներու շարքին դասադրուելու իր հերթագրութեան, կատարելագործուած նոր զինամթերք ամբարներ իր «մուրացկանութեան», այսօր թուրքիան կը գտնուի առաջին գիծի վրայ, քաջ գիտնալով թէ՛ այս հնարքներով աւելի կը զորացնէ եւ իր վարչակարգը, եւ իր տընտեսութիւնը, եւ իր զինուած ու մանաւանդ իր դիրքը շրջանին մէջ:

Պատահական չէ որ Օզալ իր վերջին եւ առօրեայ յայտարարութիւններուն մէջ շեշտը կը դնէ գլխաւոր երեք գործոններու վրայ.

Իրաքի ֆետերալիստ դառնալուն (կամ վերածուելուն) մէջ, ոչ մէկ անպատեհութիւն կը տեսնէ: Երկրորդ՝ ոչ մէկ անպատեհութիւն չի տեսներ իր մօտ կայացնելու «համաշխարհային խաղաղութեան խորհրդածողով մը Միջին Արեւելքին համար»: Իսկ երրորդ՝ ցուց տալու թէ գոյութիւն ունեցող եւ ունենալիք իրադարձութիւնները դրամատիքութեան ու համայնակարութեան միջեւ չեն, այլ՝ քրիստոնեաներու եւ իսլամներու...:

Ի՞նչ կը հետապնդէ Օզալ, երբ կ'անկարկէ ֆետերալիստ Իրաքի մը մասին, մինչ անդին՝ կ'ըսէ թէ Իրաք պէտք է պահպանուի իր այսօրվան հողային տարածքով: Ի՞նչու նման համաժողովի մը առաջարկ կ'ընէ Անկարայի կամ Իսթանբուլի մէջ: Ի՞նչի կը միտի, երբ կրօնական քնուք կ'ուզէ տալ դէպքերուն:

Առաջինը խիստ վատնակար պարագայ մըն է, որուն իրագործումը մեծ պատուաբան է շրջաններու եւ իր խիստ միտակերտ անդրադարձները կրնայ ունենալ ամբողջ Միջին Արեւելքի վրայ, մանաւանդ որ Իսրայէլ միշտ հետամուտ է այս քանդիչ քաղաքականութեան:

Օզալի այս առաջարկը թափանցիկ ձեւով ցույց կուտայ, թէ ան շահագրգռուած է իրաքաբնակ թուրք փոքրամասնութեան ճակատակցութիւնը եւ նաեւ, Բեքրուքի նաֆթային հարստութիւններով, որոնք «բաժանեալ» Իրաքի մը պարագային իրեն իրաւունք պիտի տան «տեղ» դառնալու անոնց:

Այսպէս ալ՝ անտրիկանս-թըրքական ընդհատակայ համաձայնութիւն մը կայ, Մոցի պատերազմի խաչմերուկներուն վրայ, «շահաբաժին» տալու իրեն:

Համաժողովի մը նախաձեռնութիւնն ու հիւրընկալումն ալ իրենց

մէջ կը պարունակեն *արդուտակալի* խորամանկութիւն մը, որնէ հաւանական հասկացողութեան մը պարագային թուրքիոյ կվերապահուի ներգործօն եւ ազդու դեր մը, քան մը՝ որուն աչքող կարիքը ունին (եւ պիտի ունենան) Արեւմուտքն ու յատկապէս Միացեալ Նահանգները:

Իսկ քրիստոնեայ-իսլամ հարցերով Օզալ ինքզինքնէն կուտայ իսլամ երկրի մը պարագայի դերը, որ ոչ միայն աւելի «հաւատարիմ» ու գործունեայ՝ դաշնակից մը պիտի ըլլայ իր երկրուան, այսօրուան ու վաղուան հովանաւորներուն, այլև՝ միակ գերագոր ուժը, որ հակակշիռ պիտի ունենայ Միջին Արեւելքին վրայ...:

Ծարպիկ է Օզալ իր դիւանագիտական կատարումներուն ու ելույթներուն մէջ, շատ լաւ ըմբռնած է թէ Վարշաւոյ Ուխտի քննադատով իր դիրքը իր մեծատրեւերուն նկատմամբ կրնայ խախտուի, իսկ միւս կողմէ, կ'ուզէ առաքական աշխարհին ցույց տալ մերթ իր համակրանքը, մերթ իր... քազուկը:

Բոլոր պարագաներուն, անմեղմեղաւորի ու քարկան-թշնամիի իր հնամենի խաղը կը խաղայ, որպէսզի *անարգել* դուրս գայ այս պատերազմէն:

Բարեբախտաբար, արաբական կողմեր սկսած են հաշտ աչքով չնայել այս *ործուէլ* դիրքորոշումներուն եւ անդրադառնալ, թէ թուրքիա լծուած է «կեղտոտ» մարզանքներու ու հաշուեյարդարներու:

Բայց արդե՞ք կարելի պիտի ըլլայ յաւէ՛տ անպարտող այս երկրին ախորձակները զսպել, այնքան ատեն որ ան կը վարէ Լուրդուս քաղաքականութիւնն ու կը վայելէ նեցուկը մեծապետականներուն:

ՍԱԳՈՒՄ

ՈՂԻՒՆ ԴԵՏ ՆՈՐՈԳԵԼ ՆԱԵՒ ԲԱՌԱՍԹԵՐԹԸ

Հայաստանի համայնավար տիրապետութեան օրերուն, իշխանութիւնները, դեկալար դեմքերը եւ մասնաւոր կը գործածէին իրապատուկ լեզու մը, խորհրդանշաններով մթամած, որ արտերկրի ընթերցողներուն համար երբեմն բոլորովին անհասկանալի կ'ըլլար, մերթ միայն կ'իտով ըմբռնելի, այլ պարագաներու ալ, երեսակալութեան ուժ տալով, կարելի էր միայն կուսակցի՝ ըստածէն աւելի քաջնուածը գուշակելու համար: Ստեղծուած էր համայնավար խորհրդային առանձին հրապարակախօսութիւն մը՝ ուտուցիկ, որոշապէս սնամէջ, ինքն իր վրայ դարձող պարագաների նման: Գործածուած պաշտօնական այդ քարտառը կը միտէր խօսիլ՝ տարտամնալու ճգտումով, քացի երբ հարցը կը վերաբերէր անխուսափելի այն պատգամին, թէ շնորհիւ համայնավար կուսակցութեան էր որ արեւը կը դառնար խորհրդային աշխարհին շուրջ, սպասելով այն օրուան՝ երբ ան պիտի դառնար մեր ամբողջ երկրագունդին շուրջ չեղբակցութիւն աշխարհի բոլոր ժողովուրդներուն:

Հայաստանի «Արմենփրես» լրատու գործակալութիւնը իր հաղորդած լուրերու ձեւով, քննարկով եւ լրագրական ըմբռնումով քաջատուքին չէր կազմեր: «Արմենփրես»-ի պարագային, եւ դժբախտաբար, միայն անցեալով կարելի չէ խօսիլ այսօր: Լրագրական գործակալութեան պաշտօնը թերթօն հրատարակել չէ, ոչ ալ մանրուք լուրերը յօդուածի վերածել: Ու դեռ՝ պէտք է խուսափիլ կարելու եւ անկարելու պատահարը նոյն ծաւալով հետախույզ յանձնելու փորձութիւններ:

Կը պատահի որ, օրինակի համար, սփիւռքահայ արուեստագետ

մը, յաճախ երկրորդական արժեքով մկարիչ մը կամ էսքրատային երգիչ մը Հայաստան այցելեն: «Արմենփրես»-ի մէկ թղթակիցը կը փութայ... հարցազրոյց մը ունենալ անոր հետ: Հարցումները ընդհանրապէս որնէ աղերս ալ չեն ունենար արուեստի հետ, թող որ այդ մասին ի՞նչ լուրը քան պիտի կրնար ըսել խեղճ արուեստագետը: Ու կը սկսի աժան շողակրատանքը էջեր եւ էջեր հայտնաբերութեան մասին: Այս ձեռով կը ստեղծուի նաեւ դերերու տարօրինակ շրջում մը, երբ Հայաստանի լրատուական գործակալութիւնը սփիւռքահայ մամուլին երկարօրէն կը ներկայացնէ արտերկրի արժեքները, կիսարժեքները եւ չնչազարդերը, գործածելու համար շահուրեան քառ մը:

Արտերկրի խմբագրատուները պէտք ունին շահեկան, չստակ, ամբողջական, արագ եւ քազմակրօնային հայտնի լուրերու, առաջ քաջատուր համազգային տարողութեամբ արտասանուած ճանեղու, խօսքերու քննարկներու հաղորդումը:

Ինչո՞ւ այսօր կը գրուին այս տողերը: Երեսօրէն հինգ յարկանի մէկ շննքին մէջ, ուր 32 ընտանիքներ կ'ապրին, Գեղտեմներ Յին (գոնէ այս անգամ յիշուած է դէպքի մը թուականը, որ ընդհանրապէս կ'անտեսուի) տեղի ունեցած է ահաւոր պայտում մը: Կազի արտահոսքէն ամբիջապէս քննկած են վերի յարկերը: Ընտանիքները պարպուած են, սակայն «ամենահատուկը, կ'ըսէ «Արմենփրես», կան մարդկային զոհեր եւ քազմաթիւ տուժածներ»:

Բանի՞ հոգի եւ որո՞նք են զոհերը, որքա՞ն է վիրատուներուն թիւը: Չենք գիտեր, այդ չի թուիր ըլլալ լրատուական գործակալութեան պաշտօնը, հակառակ անոր որ լուրը հաղորդուած է մէկ օր ետք:

«Բռնատիրական կարգեր»-ու օրերու լրատութիւնը այսպէս կը կատարուէր (երբ անշուշտ լրատութեան արժանի նկատուէր աղետի մը հաղորդում մը): Նոյն ձեւով ան կը կատարուի այսօր, անկախութեան հոգազինէն ետքն ալ:

Ուրիշ օրինակ մը... Երեսօրէն նոր քաղաքապետ նշանակուած է Համբարձում Գալստեան, որովհետեւ նախկին քաղաքապետի պաշտօնակատար Արտաշէս Գեղամեան «ընդմուտ կատարած է իր պարտականութիւնից ազատուելու համար»:

Կարելի՞ չէր որ հայրենի պատասխանատուները լուրը հաղորդէին առանց Գեղամեան «ի պարտականութիւնից ազատուելու ընդմուտ»-ի, գոհանալով պարզ «հրաժարագիր»ով մը:

Վերջին մի քանի տարիներուն շատ քան փոխուած է Հայաստանի, ինչպէս ամբողջ Խորհրդային Միութեան մէջ, սակայն կը տեսնուի որ այդ արտաքին փոփոխութիւններուն համընթաց չեն հասարակական յարաբերութիւնները ձեւատրող կապերը: Մարդոց մէջ դեռեւս կը յամենայ տարիներով քարացած մարդկային ընկերային հոգեբանութիւն մը, որմէ կը քիչն նաեւ լրագրողներու եւ դեկալարներու ոճը, լեզուս, արտայայտչամեթոդը:

Ժամանակի հուլովոյթին հետ կարիքը կայ նոր քառամթերքի, արտայայտելու համար ուսակալարական ոգիի եւ իրաւակարգի մը ժողովրդավար հարագատ պատկերը:

Ինչ կը վերաբերի լրատութեան, «Արմենփրես» կարիքը ունի հիմնականօրէն վերադասութեան ներթափանցելու իր լրատուական հասկացողութիւնը որպէս նիւթ, ոճ, հոգեբանութիւն, հայեացք, նպատակ եւ... արդիականութիւն:

ԳՐ. ԲԵՍՏԵՆՆ

Ռամկավար Ապատական մամուլ

Հայրենական մամուլը հարըստացաւ նոր օրկանով մը, իսկ Ռամկավար ազատական կուսակցութեան աշխարհով մէկ ցրուած 14 պաշտօնաթերթերու ընտանիքին լիիրաւ անդամը դարձաւ «ԱԳԳ»-ը, որ խմբագրական իր առաջին խօսքին մէջ տուաւ հիւստիքը առաջնորդուելու «ազգային Մեծ Երազի տեսլականով» եւ անշեղ սկզբունքները քանաձեւեց «մէկ հայրենիք, մէկ ժողովուրդ եւ մէկ ճակատագիր կարգախօսին տակ»:

«ԱԳԳ»-ի լույս ընծայումը, ազատ խօսքի քանադատութեան 71 տարիներէ ետք, եթէ մէկ կողմէ կը փաստէ մեր նոր դեկալարութեան նախաձեռնողութիւնը հետեւելու ազատականութեան ուղեգիծին, ապա, միւս կողմէ, արտերկրի հայրենեան մէջ կ'ամրապնդէ այն համոզումը, թէ «մորկաւ գատուած» թեկորները, հայրենիքի հետ հաղորդակցութեան անկաշկանդ խօսափող մը պիտի ունենան, ձերբազատուած՝ գաղափարախօսական ժամանակակից կապանքներէն, հատուածական հին մօտեցումներէն, թոյլ տալով տարբեր կարծիքներու եւ ըմբռնումներու հաստատաքայն ներթափանցումը հայրենական կեանքին մերս:

«ԱԳԳ»-ը, ուրեմն, ոսկեայ այն կամուրջն է հայրենիքէն նետուած արտասահման, արտահանման հայրենիք, ամրապնդելու փոխադարձ կապերը հայրենեան երկու հատուածներուն միջեւ:

Հսկայ առաքելութիւն մը ունի «ԱԳԳ»-ը ազգային-քաղաքական, հասարակական եւ գաղափարախօսական գծերի վրայ: Այս առումով, ան կոչուած է սփիւռքահայ իրականութեան ճշգրիտ պատկերը ներկայացնելու հայրենի զանգուա-

«ԱԳԳ»-Ը՝ ՄԷԿ ԴԱՅՐԵՆԻՔ, ՄԷԿ ԺՈՂՈՎՈՒՐԻ ԿԱՐԳԱԽՕՍԻՆ ՏԱԿ

ժին, որուն փոխանցուած պատանիները արտերկրի մասին դեռ կը տառապին առարկայականութեան եւ ճշմարտութեան պակասէ: Ազգային-ազատագրական պայքարի մեր պատմութեան զանազան դղրուածքները հայրենական մամուլին մէջ կը մեկնաբանուին միակողմանիօրէն, յաճախ գերազանահատելով կուսակցութեան մը դերը՝ ի վնաս միւսին, քայքայ միշտ մեղանշելով պատմական ճշմարտութիւններու դէմ: «ԱԳԳ»-ին առաքելութիւնն է առարկայականութիւն եւ դեմոկրատական աշխարհահայեացք մտցնել պատմական իրողութիւններու մէջ եւ ըստ արժանուան վերաբժնետրել յատկապէս Ռամկավար ազատական կուսակցութեան դերը ազգային-ազատագրական մեր պայքարին մէջ:

Ի դէպ, այս երեսօրէն կաներեւ է, երբ կը խօսուի նաեւ սփիւռքի 70-ամեայ պատմութեան մասին: Ազատականութեան մթնոլորտէն քաջալեր, հայրենի գողներն ու պատմաբանները, երբ կը փորձեն զննահատական մը տալ իւրաքանչիւր կուսակցութեան մասին, շատ յաճախ անհաշուեմէն փութաբանութեամբ, կամ պարզ անտեղեկութեան պատճառաւ եւ կամ ալ պարզապէս չարամտօրէն, կը փորձեն ստուերել Ռամկավար ազատական կուսակցութեան դերը: Անցեալին որդեգրուած մեր ուղեգիծը՝ թիկունք կանգնելու հայրենի իշխանութեան, հայ ժողովուրդի ֆիզիքական ապահովութեան նախաձեռնողութեանց մեկնած, չարաշահութիւններու առիթ կուտայ մանաւանդ դաւանափոխ այն մը՝ տարտալակներու մօտ, որոնք իրենց պարտքը լիարի կատարելիքին նախկին իշխանութեան հանդէպ:

«ԱԳԳ»-ը ուրեմն, իր առաջնաճիւղը պարտականութիւնը պիտի նկատէ համակողմանի վերլուծումներով, առարկայական եւ գիտական յօդածներով պարզաբանելու հայրենի ժողովուրդին մօտ ստեղծուած այս թիւր կարծիքը:

Եւ այսօր «ԱԳԳ»-ի ուղեգիծը հայրենի նոր իշխանութեան հանդէպ չի կրնար տարբեր ըլլալ: Ծակատագրական այս օրերուն, երբ հայրենի պետութիւնն ու ժողովուրդը ստիպուած են դիմագրասելու գրոհները ամբողջատիրական ուժերուն, իշխանութեան տապալումը չի կրնար ըլլալ մեր վարքագիծը, այլ՝ անոր ամրապնդումը, զօրացումն ու քարգաւաճումը: Ի՞նչ ալ իշխանատենչութիւնը ի՞նչ գին ազգի տարաճատման: Հիմնականը ուսմակարակական սկզբունքներու առողջ զարգացումն է, շինիչ քննադատութեան ժողովն է, որպէսզի չարգելակուի Հոշակագիրով խորհրդանշուող մեր երթը: Մեր վերապրումին համար, ազգային առողջ եւ գիտակից ուժերուն համախմբման պատգամախօսը կրնայ ըլլալ «ԱԳԳ»-ը: Համախմբում՝ հողային պահանջատիրութեան, Արցախի դատին, հայապահպանութեան, Հայաստանեանց Առաքելական Եկեղեցոյ միասնականութեան ընդհանուր նշանաբաններուն տակ:

«ԱԳԳ»-ը ի վիճակի է Ռամկավար ազատական կուսակցութեան մամուլի հարուստ փորձը փոխանցելու հայրենի իրականութեան: Երկու տարիէ ի վեր հայրենի հողին վրայ ունեցն մամուլի ազատութիւն, սակայն, ցաւօք, դեռ կը յամենան նախկին մեթոդները, լրատութեան հին ըմբռնումները, թողելով այն սպասարկութիւնը, որ

ՆՈՐՈՑ

«Բռնատիրական կարգեր»-ու օրերու լրատութիւնը այսպէս կը կատարուէր (երբ անշուշտ լրատութեան արժանի նկատուէր աղետի մը հաղորդում մը): Նոյն ձեւով ան կը կատարուի այսօր, անկախութեան հոգազինէն ետքն ալ:

«ԱԳԳ»-ը, ուրեմն, ոսկեայ այն կամուրջն է հայրենիքէն նետուած արտասահման, արտահանման հայրենիք, ամրապնդելու փոխադարձ կապերը հայրենեան երկու հատուածներուն միջեւ:

Հսկայ առաքելութիւն մը ունի «ԱԳԳ»-ը ազգային-քաղաքական, հասարակական եւ գաղափարախօսական գծերի վրայ: Այս առումով, ան կոչուած է սփիւռքահայ իրականութեան ճշգրիտ պատկերը ներկայացնելու հայրենի զանգուա-

ժին, որուն փոխանցուած պատանիները արտերկրի մասին դեռ կը տառապին առարկայականութեան եւ ճշմարտութեան պակասէ: Ազգային-ազատագրական պայքարի մեր պատմութեան զանազան դղրուածքները հայրենական մամուլին մէջ կը մեկնաբանուին միակողմանիօրէն, յաճախ գերազանահատելով կուսակցութեան մը դերը՝ ի վնաս միւսին, քայքայ միշտ մեղանշելով պատմական ճշմարտութիւններու դէմ: «ԱԳԳ»-ին առաքելութիւնն է առարկայականութիւն եւ դեմոկրատական աշխարհահայեացք մտցնել պատմական իրողութիւններու մէջ եւ ըստ արժանուան վերաբժնետրել յատկապէս Ռամկավար ազատական կուսակցութեան դերը ազգային-ազատագրական մեր պայքարին մէջ:

Ի դէպ, այս երեսօրէն կաներեւ է, երբ կը խօսուի նաեւ սփիւռքի 70-ամեայ պատմութեան մասին: Ազատականութեան մթնոլորտէն քաջալեր, հայրենի գողներն ու պատմաբանները, երբ կը փորձեն զննահատական մը տալ իւրաքանչիւր կուսակցութեան մասին, շատ յաճախ անհաշուեմէն փութաբանութեամբ, կամ պարզ անտեղեկութեան պատճառաւ եւ կամ ալ պարզապէս չարամտօրէն, կը փորձեն ստուերել Ռամկավար ազատական կուսակցութեան դերը: Անցեալին որդեգրուած մեր ուղեգիծը՝ թիկունք կանգնելու հայրենի իշխանութեան, հայ ժողովուրդի ֆիզիքական ապահովութեան նախաձեռնողութեանց մեկնած, չարաշահութիւններու առիթ կուտայ մանաւանդ դաւանափոխ այն մը՝ տարտալակներու մօտ, որոնք իրենց պարտքը լիարի կատարելիքին նախկին իշխանութեան հանդէպ:

Ողջոյն եւ քարի երթ «ԱԳԳ»-ին: փետրվար 23, 1991

THE CHRISTIAN SCIENCE MONITOR

Ահաբեկիչ շետեւանքներ

Եթե Իրաքը ներքնապես սպառնի իրեն եւ կույզնա իր հարեւանների փառասիրություններին, ապա այս պատերազմը մղված պիտի լինի պարզապես մի նախահարձակի (ագրեսոր) կրքերը զսպելու, իսկ ուրիշների ախորժակը գրգռելու համար:

Այն, ինչ հետեւելու է այսօրվա ռազմական գործողություններին Իրաքում, շատ ավելի պարտավորեցնող ու վտանգավոր է լինելու: Ամերիկայի, դաշնակից պետությունների եւ ՄԱԿ-ի առաջ դրված խնդիրները շատ ավելի ահաբեկիչ են՝ քան թվում են առաջին հայացքից: Դրանք հետո են պարզա-

ւ. որ պետք է կարողանա պաշտպանել Իրաքին: Եթե պատերազմը ամբողջապես կործանի Իրաքի քաղաքները եւ ավերի էլեկտրակազմակերպության սնման աղբյուրները, պատճառ դառնալով մեծ քանակությամբ մարդկության զոհերի, ապա Իրաքի վերականգնումը հսկայական միջազգային օժանդակու-

տակված մի կառավարության գրություն: Հրատապ հարց է առաջանալու՝ վերականգնել Քուվեյթի կառավարական մարմինները եւ կոմունալ-կենցաղային սպասարկությունները: Եւ այստեղ առավել նշանակալի են դառնալու ՄԱԿ-ի հնարավորությունները, մասնավորապես հաշվի առնելով նրա հարուստ փորձը նախ ևհետ ՄԱԿ-ի անդամակազմի անդամները (որտեղ անկախությունից առաջ այն ըստանձնել էր երկրի իշխանությունը), իսկ ապա Կամպուչիայում:

ՄԱԿ-ի կառավարությունը մշակողները, իհարկե, ճիշտ էին վարվել, այնտեղ՝ հատուկ հողվածով նշելով, որ անհրաժեշտության դեպքում՝ միջազգային օրենքը կիրառելու նպատակով Անվտանգության խորհուրդը իրավասու է զստեղծելու ՄԱԿ-ի անդամ պետությունների ուժերից կազմված մի թանկ: Սակայն մեծ պետությունները ցարդ երբեք էլ Անվտանգության խորհրդի հետ չէին համաձայնեցրել այդպիսի «արագ տեղաշարժման գունդ» ստեղծելու գաղափարը: Այն իրագործելու նախաձեռնությունն այժմ պատկանում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

պես Քուվեյթի ազատագրման կամ իրաքյան-պաղեստինյան հարցին խաղաղ լուծում գտնելու համար մղված պայքարից: Պարսից ծոցում «նոր կարգեր» հաստատելու փորձերը իրականություն չեն կարող դառնալ, մինչև երբ որ ազգերը հավասարապես ձեռնամուխ չլինեն միջազգային օրենքները կիրառելու եւ պատրաստակամություն չհայտնեն մասնակցելու այդ շրջանում «խաղաղության եւ անվտանգության» վերահաստատմանը:

Քյուն պահանջող հրատապ հարց է դառնալու: Խեղված Իրաքի առկայությունը չի կարող նպաստել շրջանի կայունության հաստատմանը:

Իրաքյան պատերազմի հանցագործներին դատելու նպատակով Անվտանգության խորհրդից պահանջվում է ազատագրված Քուվեյթում կամ Սաուդյան Արաբիայում ստեղծել հատուկ մի ազգական դատարան, սնան նրանց, որոնք երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ստեղծվեցին Նյուրնբերգում եւ Տոկիոյում: Իրաքի կողմից պատերազմի կատարման խախտումները օրենքով պարզապես չեն:

Այնուամենայնիվ, դժվար է կանխագուշակել այսպիսի մի քանի նյութական արժեք: Սպիտակ տունը եւ Կոնգրեսը նոր են սկսել նախահաշվարկ անել ՄԱԿ-ի ներկա քաղաքականության վերաբերյալ: Նրանք հետո են ՄԱԿ-ի 621 միջուկ դուլարի իրենց պարտքը մարելու: Հետևաբար, այսպիսի մի ժամանակաշրջանում, երբ օտար նյութական օժանդակության հնարավորությունները սահմանափակ են, ՄԱԿ-ը ստիպված է դիմելու այլ միջոցների: Առաջին հերթին նա կդիմի Չեչեն Բեյքերի անվան Խորհրդարանային հիմնադրամին: ՄԱԿ-ը կարիք ունի խոշոր ակիրառությունների ծաղկման, Գերմանիայի եւ Նավթարդյունաբերող երկրների կողմից, որպեսզի ի վիճակի լինի պատերազմի հետ վերականգնելու Միջին Արևելքի ավերածությունները: Նվիրատու երկրները, անշուշտ, հաշիվ են պահանջելու կատարված ծախսերի վերաբերյալ: Սա էլ մի քանի քանակական հաշվարկ է, որ Անվտանգության խորհրդի փողոցային մշտական անդամները պետք է կարողանան հավանաբար գրավելու օգնեն նոր կարգ ու կանոն հաստատելու աշխարհում:

ՄԱԿ-ը նաեւ պարտավոր է հետեւելու, որ առաջիկա տարիների ընթացքում պատերազմի պատճառով վնասների հաստատումը կատարվի Իրաքի արտասահմանյան ունեցվածքի, ինչպես նաեւ ազգային եկամտի հաշվին: Ինչպես էլ պատերազմն Իրաքի դեմ հաջող ավարտ ունենա դաշնակից գործերի համար, այն յուրահատուկ մտեղունը, որ ցույց տրվեց նախահարձակին, չի կար-

Դեմ-Վի Ըեֆֆեր
«Քրիստոս սայնս մոնիտոր»
13 փետրվարի 1991

տեսություն

ԱՐԵՒՍՏՅԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԾՈՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Պարսից ծոցի աշխարհագրունց իրադարձությունների թոհոտոհին, հատկապես ռազմական գործողությունների երկրորդ փուլի նախօրեին, երբ վաղաճեղ մի պահ փայլատակեց այն հույսը, որ վերջապես քաղաքական ուղիներով կունեղ լուծվի հնարավորություն է ընձեռնվելու, աշխարհի քաղաքական տեսարանները սկսեցին խորհել այն խնդրի շուրջը, թե պատերազմի ավարտից հետո ինչպիսի փոփոխություններ կարող են տեղի ունենալ Մերձավոր Արևելքում, եւ կնճռի հետ այս կամ այն կերպ ամրապնդել երկրներ, այդ թվում նաեւ Իրանը, ինչպիսի կեցվածք կ'ընդունեն նոր իրադրության պայմաններում:

անհանգստացնում Սաուդյան Արաբիային, քանի որ Թուրքիան հայտարարել է, թե Իրաքի տարածքի նկատմամբ որեւէ հավակնություն չունի, իսկ Միջին Երկրայումս գրադված է Լիբանանով: Իրանի իսլամական հանրապետությունն էլ ութամյա պատերազմից հետո դեռ ուշքի չի եկել: Այդ իրավիճակում ամերիկյան ուժերը, առանց ադունկ բարձրացնելու, երկար ժամանակ կմնան շրջանում:

Իրանյան «Հանրեց» օրաթերթն իր վերլուծական հարցադրումներից մեկում, խոսելով Խորհրդային Միության հայտնի «ճախածնություն» մասին, նշում է, թե Իրանը եւ Խորհրդային Միությունը վերջերս համոզեւ են պատերազմի հետագա ընթացքը կանխելու իրենց, առաջարկներով: Ըստ նրան մոտ այն մտավախություն կա, որ եթե Սադդամի ռազմական կարողությունը իսպառ չյուշնացվի, մոտ ապագայում նա կարող է մի նոր նախահարձակ ման դիմել: Այդ մտավախություններն այնքան էլ անհիմն չեն, որովհետեւ մի շարք արաբական երկրներում Սադդամին ընդունում են որպես ազգային հերոս, եւ հավատարմ են, որ նա շուտով իր ուժերը կտրամադրի պաղեստինցիներին եւ կծառայի իսլամի շահերին: Բայց արաբական մահմեդական երկրների որոշ ղեկավարներ այլ ակնկալներ ունեն: Հոսնի Մուբարաքը եւ Մ. Ֆեյսալը ձգտում են քաղաքացիական աշխարհի առաջնորդության գահին: Հաֆեզ Ասադը գիտակցելով, որ արաբական աշխարհը ի-

րեն որպես առաջնորդ գրկարաց չի ընդունի, հույսեր է փայփայում, որ նոր քաղաքական իրավիճակում Միջին գոնե կկարողանա դուրս գալ ներկայիս մեկուսացումից: Իրանի դիրքորոշումը փոքր-ինչ տարբերվում է: Թեհրանի վարչակարգն ակնկալում է ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլ նաեւ ամբողջ արաբական եւ մահմեդական աշխարհի առաջնորդի դերը, եւ մեծ հույսեր է կապում Իրաքի շիա ազգաբնակչության հետ: Իրանի ղեկավարները չնայած իրենց հայտարարություններում եւ ելույթներում պաշտպանում են Իրաքին եւ անհամբեր սպասում պատերազմի շուտափույթ ավարտին, սակայն ուզում են, որ ՄԱԿ-ը առանց հաշվի առնելու Իրանի դիրքորոշումը, Սադդամի ռազմական ուժերին նորանոր հարվածներ հասցնի:

Ամերիկյան «Վաշինգտոն պոստ» թերթն իր մեկնաբանություններից մեկում, անդրադառնալով Իրանի դերին, նշում է, թե Իրանի իսլամական հանրապետության մեջ Պարսից ծոցի պատերազմի խնդրում առկա են երկու թեւեր՝ ծայրահեղական եւ իրավաստական: Երբ 12 տարի առաջ Այաթոլլահ Խոմենինի իշխանության գլուխ անցավ, երկիրը որդեգրեց իսլամական հեղափոխության «արտահանման» քաղաքականությունը: Սակայն այդ ժամանակից ի վեր շատ քան է փոխվել, այժմ հեղափոխության «արտահանումը» օրակարգի ամենապիտակոր հարցերի թվին չի պատկանում, եւ, ինչպես կարելի է նկատել, իրանյան վարչակարգը շարունակում է պահպանել իր այժմյան կարգավիճակը: Այս պահին Իրանին հարկավոր է, որ Իրաքը իրենից ուժ չներկայացնի, նվաճողական ձգտումներ չունենա եւ դուրս գա Քուվեյթից, իսկ իշխանություններն առանց արտերկրում գործող սադդամ ուժերին դիմելու, կարողանան շրջանում լավագույնս կատարել իշխողի դերը: Չնայած Իրանում կան այնպիսի ծայրահեղական ուժեր, որոնք


կողմ են Իրանի միջամտությանը պատերազմին, եւ այն կարծիքն են, որ Իրանը չպետք է լուր ՄԱԿ-ի ագրեսիայի դեմ՝ ուղղված իր հավատակից հարեւան պետությանը, այդուհանդերձ Իրանը պահպանում է չեզոքությունը եւ ամեն կերպ ջանում չմիջամտել ռազմական գործողություններին: Չնայած Թեհրանի համաձայնությունը ավելի քան 100 ինքնաթիռ Իրան տեղափոխելու ամառային հավաստում է այդ երկրի կողմից հայտարարված չեզոքությանը, այնուամենայնիվ, Իրանը դրա փոխարեն պարտավորվել է թույլ չտալ Իրաքին օգտագործել այդ տեխնիկան քաղաքացիական ղեմավարում, որ պատերազմի ավարտից հետո մտադիր է ինքնաթիռներն օգտագործել Իրաքի հետ ունեցած ֆինանսական տարաձայնությունները լուծելու համար: Պատերազմի հետագա ընթացքը կանխելու գործում Իրանի հաղթանակը ավարտից հետո պետք է ինքնաթիռները օգտագործելու հետապնդում է երբեք նպատակ: Ըստ «Վաշինգտոն պոստի»՝ Իրանը ման քայլով փորձում է ապահովել իրատեսական թեւի գերակշռությունը ծայրահեղական նկատմամբ: Մյուս կողմից, հանդես գալով միջնորդի դերում, Իրանը հնարավորություն է ձեռք բերում երկխոսության մեջ մտնել ՄԱԿ-ի հետ, եւ վերջապես Իրանը դրանով ջանում է պատերազմից հետո շրջանում ձեռք բերել որոշակի գործոն դեր:

ԳՐԻԳՈՐ ԱՄՈՒՔԵԼՆԱՆ

ՇԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԸՐԶԱՆՆ ԱՆՀԱՆԳՍԱՑԱՑՆՈՒՄ Ե ԻՐԱՔԻ ԲՐՈՒԵՐԻՆ

Քրդերը, որ պատերազմի ընթացքում մոռացության են մատնված տեղի բնակիչների կողմից, իրենք իրենց հարց են տալիս, թե չէ՞ն մոռացվի, արդյոք, կոնֆլիկտը կարգավորելու ժամանակ նույնպես:

Նյութը կարդացե՛ք հաջորդ համարում



Շուրջ պատերազմ տույն շարասյան մեջ

Ճարտարապետ «ՄԱԿ»

Այս տարի Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատության հիւրընկալ ընտանիքին համար անակնկալ ու հանելի սորոսիւն է հայտնի տաղանդաւոր քանդակագործ, միջազգային մրցումներու դափնեկիր Լեոն Թրքմաշեանին ներկայութիւնը: Ան հրաւիրուած է իրագործելու համար ծրագիր մը կապուած հաստատութեան գեղագիտական քարեկարգման հետ: Իրեն կ'ընկերանայ որդին, երիտասարդ քանդակագործ Վահէ Թրքմաշեանը: Օր-օրի աշակերտութեան այքերուն առջեւ խոշոր եւ անտաշ քարերը կը ստանան կերպարանք, շունչ ու հոգի՝ առթելով զարմանք ու հիացում:

Ստորեւ կը ներկայացնենք մեր հարցազրոյցը Լ. Թրքմաշեանին հետ:

ՀԱՐՑՈՒՄ. Շուրջ երկու ամիս է որ կը գտնուիք Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան մէջ եւ կը զբաղիք Ձեր մասնագիտութեամբ: Ի՞նչ կը զգաք Ձեր աշխատանքի ընթացքին:

ՊԱՏԱՍԻԱՆ. Հետո լինելով Հայաստանից, իմ ընտանիքից, կարոտի եւ չիշողութիւնների այնպիսի ուժով տրամադրութեամբ, ես ինձ մեծակ չեմ զգում, չնայած տղաս ինձ հետ է: Մելգոնեանցիների հետաքրքրասիրութիւնը, նրանց ջերմ վերաբերմունքը ինձ նույնպէս դարձրեց տեղացի: Մենք ամիջակաւ մասնակցութիւն ունենք դպրոցի բոլոր միջոցառումներին եւ մեզ Մելգոնեանցի ենք զգում:

Եղի եմ Հունգարայում, Հարաւսլաւիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, եւ ամենուր քարծր պահել իմ հայրենիքի, իմ ժողովրդի պատիւը: Մակայն այստեղ Մելգոնեանում, իմ աշխատանքների կատարման ոգեւորութեան մակարդակը անսահման քարծր է: Օրերս անցնում են շատ արագ, որովհետեւ լծուած ենք աշխատանքի: Բոլորի այքի առաջ վեր եմ քարծրանում քարակերտ մեր նախնիները:

Չարմանալիօրէն զուգահիշում եմ իմ ցանկութիւնները եւ պատահա-

կանութիւնները: Կոմիտասի կերպարի վրայ միշտ աշխատել եմ, քանի որ երկար տարիներ երգել եմ Հայաստանի պետական երգչախումբում իբրեւ տենոր եւ Կոմիտասի երգը ինձ հետ է եղել, սակայն առիթը չեմ ունեցել նրա քանդակաչին կերպարը իրականացնելու: Պէտք է խոստովանեմ, որ այս հեռաւոր կողում, աշխարհի տարբեր երկրներից եկած հայ երեխաների այքերի առաջ, երջանիկ եմ քարի վրայ շունչ առնող



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԲԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԼԵՒՈՆ ԹՐՔՄԱՋԵԱՆԻ ՀԵՏ

կոմիտասի համար:
 Հ.- Ի՞նչը մղեց Ձեզ դառնալու թէքեան մշակութային միութեան անդամ: Իբրեւ Թ.Մ.Ս.ի երեսնամի մասնաճիւղի նորակազմ վարչութեան անդամ, ի՞նչ կը պատմեք վարչութեան ներկայ ու ապագայ գործունեութեանց մասին:

Պ.- Երեսնամում ես տարուած էի մեծամուն քանաստեղծ Վահան Թէքեանի արձանի, կերպարի ստեղծմամբ, որի մի տարրերակը վերջերս տեղադրուեց Երեսնամի համալսարանի դպրոցի առաջ: Միւս տարրերակը, եկող տարի զարմանք կը կանգնեցուի Աշտարակի շրջանի Կարբի գիւղում, Թէքեանի անունը կրող դպրոցի բակում: Այնպէս որ այս կերպարը ինձ հա-

մար թանկ է ու զնահատելի իբրեւ գրող, իբրեւ քանաստեղծ ու հրապարակագիր, ընդհանրապէս իբրեւ ՄՏԱՆՈՐԱԿԱՆ: Ուստի պատահական չէր իմ գործո՞ւ մասնակցութիւնը Երեսնամում Թ.Մ.Ս.-ի ստեղծման այդ հրաշալի նախաձեռնման գործում: Միութեան հիմնադրման զաղափարը մեր հայաստանցի արուեստագետներու նախաձեռնութիւնն էր: Նախագահ ընտրեցինք երիտասարդ տաղանդաւոր երգահան Վոան Գրիգորեանին: Մեր

կերտելու զաղափարը ինձ համար ծնունդ էր դեռ երեսնամում: Երբ հիմնադրուեց Թ.Մ.Ս.-ը եւ ես դարձայ կերպարուեստի մասնաճիւղի նախագահ ու վարչութեան անդամ, իմացայ որ Դեռույտում կառուցուել է Ա. Մանուկեանի, մեծ հայրենասերի, իսկական հայի թանգարանը, որոշեցի իմ կողմից մարմարէ դիմաքանդակը կերտել եւ որպէս նուէր ուղարկել: Սակայն երբ հրաւեր ստացայ զայու կիպրոս Մելգոնեան կրթական հաստատութիւն, կերտելու եւ կանգնեցնելու հայ մեծաց դիմաքանդակները, այդ համաստեղութեան մէջ իմ մտապատկերում իր ուրոյն տեղը զբաղեցրեց մեծ քարերարը: Հրաշալի մարմարից կերտուեց Ալեք Մանուկեանի կերպարը իբրեւ մելգոնեանցիներին հոգեհարազատ մի մարդու:

Հ.- Պարոն Թրքմաշեան, Ա. Մանուկեանի կողքին այս կարճատեւում մէջ աւարտելու վրայ էք ուրիշ քանդակներ ալ: Ի՞նչ կ'ուզէք աւելցնել:

Պ.- Ես անչափ ուրախ եմ, որ ինձ վիճակուեց ստեղծելու մի հերոսաբարակ, ուր գետեղուելու են հայ ազգի մեծերը: Հրապարակի մէջտեղում վեր կը քարծրանայ մեծ Մեսրոպ Մաշտոցը, որը հայ գրերը իբրեւ աստուածային շնորհում վեր պարգած ցոյց կը տայ աշխարհին, նրա շուրջ կը տարածուեն մշակույթի գործիչներ՝ Կոմիտասը, հայ ծովանկարիչ Ս. Ալվազովսկին, գիտութեան ու գրականութեան գործիչներ՝ պատմահայր Մովսէս Խորենացին ու Անանիա Շիրակացին:

Այս էլ ասեմ, ծանոթանալով կիպրացի ժողովրդի պատմութեան ու մշակութիւն, գտնելով ինչ-ինչ ընդհանրութիւններ մեր ճակատագրերի միջեւ, կերտում եմ նրանց ազգային հերոսներից մէկի՝ Կիրիակոս Մազցիսի կերպարը այն մեքենայումով, որ ես պիտի կերտի հայ ազատամարտիկի կերպարը:

ՆԿԿՈՍԻԱ
 Հարցազրոյցը վարեց
 ՆԱԶԵԼԻ ՊԱՆԵՆ-ԳՈՅՍԵՆՆ

ՏՈՐՈՒՏՈՒՆ
 Տորոնտոյի «Ալեք Մանուկեան» մշակութային կենտրոնում փետրուարի 3-ին տեղի է ունեցել ասմունքի մրցույթ, մասնակցութեամբ «Արփի» ուսումնարանի, ՀՔԸՄ-ի «Ջարուկեան» անձնօրհայ, հայ կաթողիկէ Ս. Գր. Լուսավորիչ շաքաթօրհայ, Ս. Խաչ ամենօրհայ եւ Ս. Մահակ - Ս. Մաշտոց շաքաթօրհայ վարժարանների 30 սաների: Ներկա են եղել 300 հանդիսականներ:

Նիստում հունվարի 13-ին հայ հին քնակարաններին եւ անրոցներին նվիրված զուգ դասախոսութեանը մասնակցեցին հանդես են եկել Ալեքից (Գերմանիա) հրաժիրված դասախոսներ Արմեն եւ Մարգարիտ Հախնազարյան ամուսինները: Ծուցարկական նյութերի օգնութեամբ նրանք ցույց են տվել հայ ճարտարապետութեան քնազավառում համեմատաբար ընդհանրապէս անսովորական տիպի կառուցների առանձնահատկութիւնները:

Արմեն Հախնազարյանը, մասնագիտութեամբ ճարտարապետ, Գերմանիայում գործող «Հայկական ճարտարապետութեան ուսումնասիրող կազմակերպութեան» համահիւրըն է, որի անդամ են նաեւ գերմանացի մասնագետներ: Նրա կինը՝ Մարգարիտը, գերմանի լինելով հանդերձ, խոսում է անթերի արեւելահայերենով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՈՒ ԴԱԲՈՒՆ

Մի խումբ հայ մշակույթի նվիրակների նախաձեռնութեամբ Արու Դաբոնում ստեղծվել է Հայկական մշակութային ընկերակցութիւն, որի նպատակն է լինելու փոքրաքիվ այդ զաղութում վառ պահել հայ մշակույթի եւ գեղարվեստի սերը: Նորաստեղծ այս միջոցառումը միջոցառումն է եղել դասախոսական մի երեկո, որի ընթացքում լիքանախապ արվեստագետ Վազգեն Թուրքումեջանը խոսել է «Մտորումներ հայկական արվեստի ու նրա կորսված արժեքների շուրջ» թեմայով:

50-ՐԴ ՀՈՒԲԵԼՅԱՆԱԿԱՆԸ

Նախօրին «Շինիկ» - «Լոկոմոտիվ» եւ «Սպարտակ» - «Տորպեդ» զավթային հանդիպումներով սկսվեց ԽՍՀՄ ֆուտբոլային ճոր մրցաշրջանը, ընդ որում առաջին զույգը անցկացրեց նախորդ մրցաշրջանից հետագծված 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումը: Պատասխան խաղը կայանալու է մարտի 5-ին, որից հետո հաղթողը պարիի 2-ին քառորդ եզրափակիչում մրցելու է Սվերլովսկի «Ուրալմաշի» հետ: Իսկ ահա «Սպարտակ» - «Տորպեդ» քառորդ եզրափակիչ հանդիպումը կողմերի համար մարտի 6-ին կայանալից եւրոպական պաշտոնական մրցաշարերի խաղերից առաջ նաեւ ուժերի կարեւոր ստուգատես է:

Ֆուտբոլասերները հավանաբար գիտեն, որ վաղը «Արարատ»ն էլ մրցաշրջանը սկսելու է զավթային հանդիպումով եւ քառորդ եզրափակիչում ընդունելու է Օդեսայի «Չերոմոտորցի»-ն: Խաղը կայանալու է Արտաշատի քաղաքային մարզադաշտում եւ սկսվելու է ժամը 15-ին: Հաջողութեան դեպքում մեր թիմը կիսաեզրափակիչում կմրցի «Սպարտակ»-«Տորպեդ» զույգի հաղթողի հետ: «Արարատ»ը ԽՍՀՄ զավթային խաղարկութեւններում արդեն 3 անգամ հանդիպել է «Չերոմոտորցի»-ի հետ: 1971 թվականին 1/16 եզրափակիչում երեսնամի հաղթել է 1:0 հաշվով, իսկ Օդեսայում արձանագրվել է ոչ-ոքի՝ 2:2: 1979 թվականի երեսնամի փնջային մրցաշարում մեր թիմը գլխել է Օ:1 հաշվով: Հուսանք, որ այս անգամ հաջողութեւնը կուղեկցի «Արարատին», առավել եւս, որ կիսաեզրափակիչ մտնելու դեպքում, մեր խաղացողներից շատերն իրավունք կստանան կրելու սպորտի վարպետի կոչումը:


Քառորդ եզրափակիչ վերջին զույգը կազմելու են ԲԿՄԱ-ն եւ Մինսկի «Դինամոն», որոնք մրցելու են մարտի 5-ին:

Ստորեւ ձեր ուշադրութեան ենք ներկայացնում ԽՍՀՄ զավթային նախորդ 49 խաղարկութեւնների եզրափակիչ հանդիպումների մասնակիցներին ու զավթարկիւրներին:

1. 1936 թ. Լոկոմոտիվ-Դինամո Թք. 2:0 (Սոկոլով, Լավրով)
2. 1937 թ. Դինամո Մ. - Դինամո Թք. 5:2 (Սեմիչաստնի - 3, Սմիլոնով, Իլին, Վ. Բերձեմիշվիլի, Մ. Բերձեմիշվիլի)
3. 1938 թ. Սպարտակ-Էլեկտրիկ 3:2 (Գուլյան, Ան. Ստարոստին, Սեմյոնով, Յարլոչկին, Գուսեւ)
4. 1939 թ. Սպարտակ-Ստալինեց 3:1 (Սեմյոնով, Սոկոլով, Լասին, Բարիշեվ-սեփական դարպասը)
5. 1944 թ. Չեմիք-ԿԲԿՏ 2:1 (Չուչեկով, Մալինկով, Գրիցին)
6. 1945 թ. ԿԲԿՏ-Դինամո Մ. 2:1 (Նիկոլաեւ, Վիճոգրադով, Ա. Սոլովյով)
7. 1946 թ. Սպարտակ-Դինամո Թք. 3:2 լրացուցիչ ժամանակում (Կոնով, Գլազով, Տիմակով, Գոգոբերիձե, Անթան)
8. 1947 թ. Սպարտակ-Տորպեդ 2:0 (Գեմեմտեւ, Տիմակով)
9. 1948 թ. ԿԲԿՏ-Սպարտակ 3:0 (Վ. Սոլովյով-2, Նիկոլաեւ)
10. 1949 թ. Տորպեդ-Դինամո Մ. 2:1 (Նեչաեւ, Պոնոմարեւ, Վ. Իլին)
11. 1950 թ. Սպարտակ-Դինամո Մ. 3:0 (Տերենտեւ, Տիմակով, Գեմեմտեւ)
12. 1951 թ. ՍԲԿՏ-Կալինին քաղաքի թիմ 2:1 լրացուցիչ ժամանակում (Վ. Սոլովյով, Գրիցին, Չիստոխիլով-սեփական դարպասը)
13. 1952 թ. Տորպեդ-Սպարտակ 1:0 (Պետրով)
14. 1953 թ. Դինամո Մ. -Կրիլյա Սովետով 1:0 (Սալմիկով)
15. 1954 թ. Դինամո Կ.-Սպարտակ Եր. 2:1 (Տերենտեւ, Կոման, Մերկուլով)
16. 1955 թ. ՍԲԿՏ-Դինամո Մ. 2:1 (Ազապով-2, Ռիժկին)
17. 1957 թ. Լոկոմոտիվ-Սպարտակ 1:0 (Բուրուկին)
18. 1958 թ. Սպարտակ-Տորպեդ 1:0 (Սիմոնյան)
19. 1960 թ. Տորպեդ-Դինամո Թք. 4:3 լրացուցիչ ժամանակում (Գուսարով-2, Իվանով-2, Բարբաչայ, Կալոեւ, Մելաշվիլի)
20. 1961 թ. Շախտյոր-Տորպեդ 3:1 (Անանչենկո-2, Ռոդին, Մետրեւելի)
21. 1962 թ. Շախտյոր-Չմանյա տրոյա 2:0 (Մալրոնով, Մավելեւ)
22. 1963 թ. Սպարտակ-Շախտյոր 2:1 (Խուսաինով, Ֆալին, Կոլտով)
23. 1964 թ. Դինամո Կ.-Կրիլյա Սովետով 1:0 (Կանեւսկի)
24. 1965 թ. Սպարտակ-Դինամո Մն. 2:1 լրացուցիչ ժամանակում (Խուսաինով-2, Արզամասցեւ)
25. 1966 թ. Դինամո Կ.-Տորպեդ 2:0 (Քիշեւց, Քիթա)
26. 1967 թ. Դինամո Մ.-ԲԿՄԱ 3:0 (Գուսարով, Վշիվցեվ, Անիկին)
27. 1968 թ. Տորպեդ-Պախտակոր 1:0 (Մավչենկո)
28. 1969 թ. Կարպատներ-ԲՄԱ Դոնի-Ռոստով 2:1 (Լիխաչեւ, Բուլգակով, Չինչենկո)
29. 1970 թ. Դինամո Մ.-Դինամո Թք. 2:1 (Էտրեկով, Եվրոմիխին, Խինչազաշվիլի)
30. 1971 թ. Սպարտակ-ԲՄԱ Դոնի Ռոստով 2:2, 1:0 (Խուսաինով,



- Լոգոֆետ, Կուլչինսկաս, Չինչենկո, Կիսելեւ)
31. 1972 թ. Տորպեդ-Սպարտակ 0:0, 1:1, 11 մետրանոցներով 5:1 (Նիկոնով, Պապաեւ)
 32. 1973 թ. Արարատ-Դինամո Կ. 2:1 լրացուցիչ ժամանակում (Իշտոյան-2, Կոլտով)
 33. 1974 թ. Դինամո Կ.-Չարյա 3:0 (Մուստյան, Բլոխին, Օնիշենկո)
 34. 1975 թ. Արարատ-Չարյա 2:1 (Անդրեասյան, Մարգարով, Կուլչենկով)
 35. 1976 թ. Դինամո Թք.-Արարատ 3:0 (Վալիանի, Կանթելաձե, Չելեքաձե)
 36. 1977 թ. Դինամո Մ.-Տորպեդ 1:0 (Կազաչոնկ)
 37. 1978 թ. Դինամո Կ.-Շախտյոր 2:1 լրացուցիչ ժամանակում (Բլոխին-2, Մտարուխին)
 38. 1979 թ. Դինամո Թք.-Դինամո Մ. 0:0, 11 մետրանոցներով 5:4
 39. 1980 թ. Շախտյոր-Դինամո Թք. 2:1 (Մտարուխին, Պյանիխ, Չիլայա)
 40. 1981 թ. ԲՄԱ Դոնի Ռոստով-Սպարտակ 1:0 (Անդրեւ)
 41. 1982 թ. Դինամո Կ.-Տորպեդ 1:0 (Բալտայա)
 42. 1983 թ. Շախտյոր-Մետալիստ 1:0 (Ճաշչենկո)



- գրում է Գ. Ենգիբարյանը
43. 1984 թ. Դինամո Մ.- Չեմիք 2:0 լրացուցիչ ժամանակում (Գազաեւ, Բորոդյուկ)
 44. 1985 թ. Դինամո Կ.-Շախտյոր 2:1 (Գեմյանենկո, Բլոխին, Մորոզով)
 45. 1986 թ. Տորպեդ-Շախտյոր 1:0 (Կորզեւ)
 46. 1987 թ. Դինամո Կ.-Դինամո Մն. 3:3, 11 մետրանոցներով 4:2 (Ռազ, Կուլչենկով, Չավարով, Կոնդրատեւ, Չիզմանտովիչ, Ալեքսիկով)
 47. 1988 թ. Մետալիստ-Տորպեդ 2:0 (Ալեւեւ, Բարանով)
 48. 1989 թ. Դեմալ-Տորպեդ 1:0 (Շոխ)
 49. 1990 թ. Դինամո Կ.-Լոկոմոտիվ 6:1 (Միխայիլչենկո, Ռազ, Մալչենկո-3, Մելչեկին, Լիտովչենկո)

Մտրգական էջը վարում է մեկնաբան Մարեն ԲԱՂՎԱՍՏՐՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ... «ՓԼՈՒԶՎՈՂ» ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

interfax

28 փետրվար 1991

Ռուսաստանի Ֆեդերացիայի Գերագույն խորհուրդը վ. Ստեպանովին նշանակել է ՌԻՖՍՄ Գլխավոր դատախազ: Մինչ այդ նա աշխատել է որպես ՌԻՖՍՄ Գլխավոր դատախազի առաջին տեղակալ: Պատգամավորներից մեկի այն հարցին, թե արդյոք դրա կգա նա իՄԿԿ-ի շարքերից, եթե ընտրվի գլխավոր դատախազ, Ստեպանովը պատասխանել է. «Ես կուսակցության մեջ եմ ընդունվել 19 տարի առաջ՝ ծառայության ժամանակ եւ նրա շարքերից դուրս գալու մտադրություն չունեմ»:

Մարտի երկուսից Մոսկվայում կեսօրի Գեներալատական կոնգրեսի համակարգիչ խորհրդի երկուրորդ ժողովը: Նախատեսվում է, որ կոնգրեսին կմասնակցեն համարյա բոլոր հանրապետությունների դեմոկրատական կուսակցությունների և շարժումների ներկայացուցիչներ: Ենթադրվում է քննարկել երկրի քաղաքական դրության, դեմոկրատական ուժերի խնդիրների և միութենական հանրապետի մասին հարցերը:

Կիևի Դոկտեմբերյան անվան կինոստուդիայում դադարեցվել են կինոֆիլմերի նկարահանումները՝ ղեկավարության և հայտնի կինոռեժիսորների միջև ընդհարման պատճառով: Կիևյի 11 ճանաչված գործիչներ, այդ թվում բոլորը միջազգային և համամիութենական կինոփառատոների դափնեկիրներ, աշխատանքից դուրս գալու դիմում են ներկայացրել: Պատճառը քաղաքական գրաբեկությունն է, որը մտցրել է կինոստուդիայի նոր տնօրեն Վիկտոր Գրոմովը: Ռեժիսորների կարծիքով սկսվել է ուկրաինական ազգային կինոյի վերածնունդի ծրագրի շրջափակման գործընթաց, ադմինիստրատիվ մեթոդներով ճնշվում է ստեղծագործական չարաքանչյուր նախաձեռնություն, հույսը դրվում է ցածրահարգ զվարճալի ֆիլմերի վրա:

Լեհիցորդի քաղաքային խորհուրդը որոշում է ընդունել «Լեհիցորդի հեռուստատեսությունների կարգավիճակի մասին»: Որոշման մեջ ասվում է, որ կոմիտեն վերաձևվում է ինքնուրույն Լեհիցորդի պետական հեռուստատեսությունների ղեկավարության հետևյալ հիմնադիրներով: Հեռուստատեսությունների աշխատանքային կոլեկտիվը, Լեհիցորդի մարզային և քաղաքային խորհուրդները, ՌԻՖՍՄ-ի մամուլի և զանգվածային լրատվության միջոցների նախարարությունը: Ընկերությանը կից նախատեսվում է ստեղծել դիտորդ հանձնաժողով:

Համաձայն ՌԻՖՍՄ-ի և Ադրբեյջանի մշակույթի նախարարներ Յուրի Մուլոմիևի և Փոլադ Բյուլ-Բյուլ օդու ստորագրած պայմանագրի որոշված է երկու հանրապետություններում քացել ազգային մշակույթի կենտրոններ: Ռուսաստանյան Ֆեդերացիայում այժմ ապրում են 300 հազար ադրբեյջանցիներ, իսկ Ադրբեյջանում՝ մոտ 400 հազար ռուսներ:

ՎՐԱՍՏԱՆ

27 փետրվար 1991
Վրաստանի խորհրդարանը որոշել է վրաց կնքամոր պատվին հանրապետության Բոգոյանովկայի

շրջանը վերանվանել Մուրթ Եհնոյի շրջան: Այն իր նախկին անվանումն ստացել է դուխորոր կրոնական աղանդավորների Բոգոյանովկա գյուղի անունից:
Վրաստանի խորհրդարանը հրաժարվում է մարտի 17-ին անցկացնել համամիութենական հանրաքվե: Փոխարենը մարտի 31-ին անցկացվի հանրապետական հանրաքվե, որտեղ կդրվի հետևյալ հարցը. «Համաձայն եք դուք Վրաստանի վերականգնմանը, հաշվի առնելով 1918 թ-ի մայիսի 26-ի անկախության վավերագիրը»:

ՍՈՒՂՈՎԱ

28 փետրվար 1991
Սուղդվայի վարչապետ Միրչա Դրուլը հայտարարել է, որ ինքն այլևս հրաժարական չի տա: Նա հույս է հայտնել, որ պրեզիդենտի և խորհրդարանի օգնությամբ հանրապետությունը դուրս կբերի ծանր տնտեսական դրությունից:

Baltfax

27 փետրվար 1991
Լիտվայի երկրամասի պաշտպանության նախարարության գեղ-խավոր տնօրեն Աուդրուս Բուտկյավիչուսը հայտարարել է, թե քաղաքացիական անհնազանդությունն ու հոգեբանական պաշտպանվածությունը պիտի լինեն պաշտպանության ծրագրերը: Դրա իրագործման հիմնական սկզբունքը պետք է լինի՝ չհամագործակցել երկրի ներսում տեղակայված արտաքին ուժերի հետ:

Լատվիայի ներքին գործերի նախարար Ա. Վազնիսը ԽՍՀՄ պատգամավոր գնդապետ Վիկտոր Ալկսիսին դատել է տալու: Հայտնի է, որ վազնիս նախարարին մեղադրել է Ռիգայում հունվարյան դեպքերի ժամանակ Լատվիայի ԿԳՄ-ից 850 հրացաններ մարտիկներին հանձնելու մեջ: Հետաքննությունը պարզել է, որ նախարարի կողմից նման խախտումներ չեն եղել:

Ֆրանսիական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար Միշել Վոգելը Մոսկվայի ֆրանսիական դեսպանատանը հանդիպել է մերձբալթյան հանրապետությունների ներկայացուցիչների հետ: Մ. Վոգելը հայտարարել է, որ իրենց քաղաքականությունը եւ կոնկրետ գործողություններն ուղղված են ԽՍՀՄ-ում ժողովրդավարության պաշտպանությանը, որից էլ հետևում է մերձբալթյան պետությունների անկախության վերականգնմանը:

Վիլնյուսում հարցման ենթարկված տարբեր ազգությունների պատկանող 800 քնակիչներից 81,6 տոկոսը քաջասարք է գնահատում պրեզիդենտ Գորբաչովի դիրքորոշումը Լիտվիայի և մյուս մերձբալթյան հանրապետությունների նկատմամբ: Գորբաչովին դրական գնահատական են տվել հարցազնվածների միայն 9,4 տոկոսը: Ըստ ազգային կազմի պրեզիդենտի գործունեությունը քաջասարք են գնահատում լիտվացիների 90 տոկոսը, լեհերի 68 տոկոսը, ռուսների 68 տոկոսը, քելտոսների 60 տոկոսը եւ այլ ազգությունների 68 տոկոսը: Բոլոր էլջինի գործունեությանը դրական գնահատական են տվել հարցազնվածների 70 տոկոսը:

SULLIS
Մեր սեփական թղթակից
ԳԱՅԱՆԵ ԱՖՐԻԿԱՆ

Ըստոնական Հանրապետության կառավարությունը մարտի 3-ի հանրաքվեին հրավիրել է փորձագետներ 30 երկրներից: Արտասահմանյան դիտորդներին հրավիրելու է ուղարկված նաև Ըստոնական Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի և որոշ կազմակերպությունների կողմից: Սպասվում է, որ նրանք կտան միջազգային մակարդակով ճշգրիտ գնահատական:
Մարտի մեկից Ըստոնիայում է գտնվում դիտորդների մեծաքանակ խումբ երոպական պահպանողական կուսակցությունների միությունից: Մարտի 2-ից 3-ը կանցկացվի տեղական պահպանողականների կողմից կազմակերպված միջազգային կոնֆերանս:

ՌԻԳԱ

Լեհիցի քանգարանը, որը հիմնադրվել է 30 տարի առաջ Ռիգայում, այժմ կղանա Լատվիայում սոցիալ-դեմոկրատիայի պատմության քանգարան: Լեհիցի կյանքի հետ կապված բոլոր նյութերը կպահվեն քանգարանի ֆոնդում, որի ցուցանիշները քարտեզավորվում են: Կահպանվի նաև սոցիալ-դեմոկրատ Միխայիլ Միլվինի տուն-քանգարանը, ուր իջնանել է Լեհիցը:

ՎԻՆՆՈՒՍ

Եթե Լիտվան մոտ ժամանակներս ձեռնարկի իր տնտեսության կայունացմանն ուղղված միջոցներ, ապա հանրապետության տրտեսությունը կհասցվի անուղղելի վնաս. ասվում է լիտվական կառավարության դիմումում ուղղված հանրապետության քնակիչներին:

Դա քաջատրվում է նրանով, ընդգծված է փաստաթղթում, որ Լիտվայի տնտեսությունը դեռևս կախված է Խորհրդային Միության տնտեսությունից, որտեղ տարվա սկզբից 2-3 անգամ աճել են Լիտվա առաքվող հումքի և այլ ապրանքների գները: Իսկ մարտի 11-ից սպասվում է սննդամթերքի գների քարժրացում:

Շուկայի պաշտպանության առաջնահերթ միջոցների թվում, կառավարությունը նշեց սննդամթերքի գների քարժրացումը և ոչ մթերքային արտադրանք տվող հիմնարկների թուլությունը վաճառել իրենց արտադրանքը նոր, քարժրացված գներով:

Լիտվայի կառավարությունը գների մոտակա քարժրացման կապակցությամբ մշակել է քնակությունը դրամական փոխհատուցման համակարգ:

ԷԼԲԱԿՅԱՆՆ ԱԶՍԵ Է ԱՐԶԱԿՎՈՒՍ

6 տարի եւ 9 ամիս քանտարկությունից հետո ազատ է արձակվել հայ քաղաքական քանտարկյալ Բաֆֆի Էլբակյանը: Բ. Էլբակյանն Անդրանիկ Պողոսյանի հետ Բելգրադում սպանել էին Թուրքիայի դեսպան Գալիթ Բալբարին: Բ. Էլբակյանն այժմ գտնվում է Բելգրադում:
Ձանազան երկրների քանտարում դեռ մնում են հայ քաղաքական քանտարկյալներ՝ Վիգեն Հովսեփյանը, Գառնիկ Սարգիսյանը, Ստիվ Դադայանը, Հարի Սասունյանը, Բաֆֆի Թիթիզյանը, Գետրո Գարաշչյանը, Հովիկ Նուպարյանը, Վարուժան Կարապետյանը, Միմոն Նալիդյանն ու Մարտիրոս Ժամկոչյանը: Ըստ հավաստի լուրերի Մ. Ժամկոչյանը նույնպես ազատ է արձակվել քանտարից, սակայն գտնվում է վարչական հսկողության տակ:

ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ

50 ՄԻՆԱՐԴ ԴՈՒՍՐ ԶՈՒՎԵՅԹ ԿԵՐԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ծաղկոնիայի կառավարությունը հայտնել է, որ այն 9 միլիարդ գումարը, որը հանձն էր առել Ծաղկոնիան միացյալ ուժերի գործողությունների ֆինանսավորման համար, պիտի տրամադրվի Պարսից ծոցի երկրների վերականգնմանը, սակայն վերապահություն է հայտնվում Իրաքի կազմակերպմանը, եթե Մ. Հուսեյնը շարունակի մնալ իշխանության գլուխ:

Ծաղկոնիայի արտաքին գործերի նախարարության քանքերը հայտնել է, որ իր կառավարությունը պատրաստել է «արտակարգ ծրագիր», որը նպատակադրում է կազմակերպել Քուվեյթի պետական կառույցներն ու հասարակական սպասարկությունները՝ առ այդ տրամադրելով 126 միլիոն դոլար գումար:

«Թեհրան քայմզ» օրաթերթը, որը հիմնականում արտահայտում է Իրանի իսլամական հանրապետության արտգործ նախարարության տեսակետները, փետրվարի 25-ի համարում ցամաքային պատերազմի կապակցությամբ մի հոդված է հրաչարակել, ուր գրում է, թե ոչ մի կերպ չի կարելի արդարացնել ցամաքային պատերազմը, եւ նման հարձակումն անօրինական ու անարդարացի է: Ծամաքային պատերազմի կանխման գործում Անվտանգության խորհրդի ծախողումը մեծապես կվճռի ՄԱԿ-ի հեղինակությանը շրջանում եւ ամբողջ աշխարհում: Թերթն ավելացնում է, թե ցամաքային պատերազմն սկսվեց այնպիսի ժամանակ, երբ Իրաքը հայտնել էր իր գործերի անվերապահ դուրս բերման պատրաստակամությունը: Իրաքի կողմից արված հայտարարությունը միանգամայն համապատասխանում էր Անվտանգության պահանջներին: «Միացյալ Նահանգների գործակերպը Պարսից ծոցում ուղղված է ոչ թե Քուվեյթի ազատագրմանը, այլ հետապնդմանը, այլ հետապնդմանը»,- վերջացնում է թերթը:
«Թեհրան քայմզ»
25 փետրվար 1991

տնել էր իր գործերի անվերապահ դուրս բերման պատրաստակամությունը: Իրաքի կողմից արված հայտարարությունը միանգամայն համապատասխանում էր Անվտանգության խորհրդի կոնվենցիայի պահանջներին: «Միացյալ Նահանգների գործակերպը Պարսից ծոցում ուղղված է ոչ թե Քուվեյթի ազատագրմանը, այլ հետապնդմանը և ուրիշ նպատակներ»,- վերջացնում է թերթը:
«Թեհրան քայմզ»
25 փետրվար 1991

کیمیا

ԽՆԱՍՏԱԿԱՆ ԴԵՄՈՒՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՆՈՒՄԻ ԼՆՈՒՍԸ ԱՐՏԱՅՈՒԼԵՑ ՌԵՃԻՍԻ ԼԿԱԿԱՍՐ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Թեհրանի» իրազեկ աղբյուրների համաձայն իսլամական-հանրապետական ռեժիմի վարիչները ծայրաստիճան անհանգստացած են իսլամական հեղափոխության տարեդարձի նկատմամբ ժողովրդի անտարբերության պատճառով: Այս տարվա տոնակատարությունը չափազանց անշուք անցավ եւ մարդկանց հրապարակները հանելու ռեժիմի համառ ջանքերը ապարդյուն մնացին: Ռեժիմի տնտեսական քայքայումը աշխուժացնելու միակ տպավորիչ գործողությունը Թեհրանի փողոցների լուսավորությունը եղավ: Կառուցվել էր շուրջ մեկ կիլոմետր ձգվող լուսադրոզ գեղեցիկ կամար: Սակայն նույնիսկ դրանք տոնին չուր չուր ժողովուրդը հանգստյան օրերը օգտագործեց ճամփորդության կամ տնային գործերի համար:

Նույնքան անհետաքրքիր էին արվեստի և մարզական փառատոները: Անցած տարիներ հիմնականությամբ շատ քիչ էր թե իրանցի, թե արտասահմանցի մասնակիցների թիվը:

Ավելի ուրույն էր քաղաքական պատկերը: Տոնակատարությունների արտասահմանյան հյուրերի թիվը չէր հասնում նույնիսկ տասնի:

ԵՍ ԻՍ ՎԵՐՋԻՆ ՈՌԻՔԼԻՆ ԿՏՐԱՍՏՈՐԵՍ ԻՐԱԽԻՆ

Դադստանի մատչելի աշխատանքային Լեհիցի անվան հրապարակում տեղի ունեցավ քաղաքացիական պատերազմի հավաք, որը կազմակերպել էր իսլամական-ռամականական կուսակցության ներքո գործող Իրաքի աջակցող կոմիտեն: Բազմաթիվ մուսուլմաններ, կոմունիստներ, և անկուսակցականներ քաղաքում էին «Պաղեստինը, Իրաքը եւ Դադստանը քարկաններ են», «ՄԱԿ-ը ԱՄՆ-ի կամակատարն է», «Ոչ պատերազմին» կարգա-կոչերը: Հանգստակցություն էր հավաքվում հոգուտ Իրաքի ժողովրդին: Երկու ժամվա ընթացքում հավաքվեց մոտ 23 հազար մարդ: Հավաքվածներն ընդունեցին քանաձեռ, որում ասվում էր, թե եկել է հակամարտական կուլիցիա ստեղծելու եւ կեղտոտ քաղաքացիների գործողությունները կանխելու ժամանակը: Դադստանը ցանկանում է իր հարեւանների շարքում տեսնել երազարկյալ Իրաքին, ոչ թե թշնամի Սպիտակ տանը: Ուստի հանրապետության հոգեկոտակարությունը պատրաստ է ցույց տալ թե դրամական, թե այլ օգնություն իր արյունակից երազներին: Ինչպես հայտնում է Հյուսիսային Կովկասի մուսուլմանների Հոգետր վարչության նախագահի տեղակալ Ս. Արուստիանովը, Պարսից ծոց որպես կամավոր մեկնելու ցանկացողների թիվն անցնում է մի քանի հազարից:
«Կոմսոմոլսկայա պրավդա»
27 փետրվար 1991

